

ԳՈՂԹՆԻ ՎԱՆՔԵՐԸ

Հ. Ինճիճեան Մ. Խորենացիի եւ Թ. Արծրունիի հետեւելով Գողթն զինեւէտ ու գեղեցիկ գաւառը Վասպուրականի մէկ մասը կ'ընդունի (Ստորագրութիւն, էջ 212), մինչ շ. Ալիշան Ս. Օրբէլեանի համաձայն զայն Սիւնիքի մաս կը նկատէ (Սիւսական, էջ 309—348): Իրականին, ինչպէս շ. Ինճիճեանի եւ շ. Ալիշանի եւս ծանօթ է, Գողթն այդ երկու նահանգներու ալ մաս կազմած է՝ նախապէս Արծրունիներու եւ ապա Սիւնիքներու իշխանութեան տակ գտնուելով*:

1. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ

Վանանդի մէջ: Սմբատեանի համաձայն շինուած է Թարգմանիչներու շրջանին (450ին) Բարթողիմէոս Առաքելի Կո(ւ)մսի աշակերտին գերեզմանին վրայ¹: Նորոգուած է Մատթէոս Վանանդացիէն եւ «կայ յամբողջութեան, նոյնպէս եւ սարիսպն, իսկ սենեակը անհետացեալք» (Երնջակ, էջ 491):

2. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱՆԱՊԱՏԸ

Ազուլիսի Ս. Աստուածածին եկեղեցին «անապատ» եւս կոչուած է: Գուցէ անոր շուրջը գտնուած քանի մը խզիկներու մէջ ճգնորդներ եղած ըլլան:

Ազուլիսի ուրիշ մէկ եկեղեցին ալ — ան եւս Ս. Աստուածածին անուանուած — ժամանակ մը կուսաններու հաւաքալայր եղած է (Ալիշան, Սիւսական, էջ 329, 332. ձուքաղ, 1862, էջ 86—87. Նոր-Գար, 1862, Թ. 20):

3. Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ (ՆՈՐ-ԳԻՒՏԱՅ) ՎԱՆՔԸ

Սմբատեան կը գրէ՝ «Նոր-Գիւտայ սուրբ Թարգմանչաց վանք, շինեալ վերակացութեամբ Եսայի վարդապետի յամին 1662: Վանքն կիսով չափ խոնարհեալ, միայն սեւանն յամբողջութեան կայ, իսկ սենեակը եւ սարիսպն անհետացեալք» (Երնջակ, էջ 490):

* Սմբատեան՝ Նախիջեան, Գողթն եւ Երնջակ Արարատեան նահանգի գաւառներ կը համարէ (Երնջակ, էջ 515—517): Երնջակ Գողթնի մաս եղած է: Կարճ ժամանակ մը: Անոր վանքերու մասին այլուր: ¹ շ. Ալիշան Կո(ւ)մսի գերեզմանը եւ անոր վրայ շինուած մատուռ մը գրեթէ Ազուլիսի Ս. Թովմայի վանքի մօտ (Սիւսական, էջ 329):

4. Ս. ԹՈՎՄԱՅԻ ԿԱՄ ԱԳՈՒԼԻՍԻ ՎԱՆՔԸ

Ս. Թովմայի վանքը, զոր Արբաճաճ Կրեատացին կ'որակէ՝ «հիանալի եւ զարմանալի տեսողաց»² (Պատմադրութիւն, էջ 77) կառուցուած է Ազուլիս գիւղաքաղաքին վանք թաղին մէջ եւ կոչուած է ստէպ սարգապէս Ազուլեաց կամ Ազուլիսի վանք:

Մենաստանին երկարութիւնն է 38 արշին եւ լայնութիւնը՝ 27 արշին: Շինուած է կարմրաւուն կոփածոյ քարերով: Պատերը միասպաղաղ են եւ զուրկ քանդակներէ ու կամարներէ: Կաթողիկէն շատ սարգ է եւ ունի 12 ցածկեկ ու նեղիւկ սպտուհաններ եւ 11 հատ լուսամուտ:

Եկեղեցւոյն դռներն երեք հատ են: Անոնց գեղեցկագոյնն է արեւմտեանը: Նուրը նիշխերով եզրափակուած երեք համակենդրոն ոտմանական կամարները կը պատեն քառանկիւնի դուռը, որուն վերեւը քանդակուած է Գրիստոս՝ խաչը ձեռքին մէջ եւ առջեւը՝ Թովմաս առաքեալը: Նա Յիսուսի կողք կը շօշափէ:

Անոր կողքերուն նկարուած են Տիրամօր եւ Մազդազլինացիին պատկերները եւ վերը՝ Հայր Աստուած, արեւն ու լուսինը: Իսկ վարը կայ այս արձանագրութիւնը՝

«Բարգուղիմէոս ի Հայս եկեալ, Չտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ, Սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ, Կոմսի անուն զիւր աշակերտն Տեսուչ տեղոյս գնա եղեալ. Որ եւ գտուն Գողթ գաւառիս ի նա յանձնեալ գժտն ընտրեալ, Մերձ Ազուլիս եւ Դաշտ գովեալ Յղնա (Յղնա) Ռամիս սըմա յանձնեալ. Բուստ, Փառակա եւս տըվեալ, Բուհրուտ, Տեւի անքակ եղեալ, եւ Շրջու ընդ Մասրեան, Աղահեցիկ ցանկ հաստատեալ. Դաստակ, Վանանդ կցորդ եղեալ, Տրունիս, Տնակերտ միաբանեալ, Օրովանիս եւ Գաղաքիկ, եւ անապատն Հանդամիջաց, Վեռն (?), Գեացիկ եւ Գեղերեցիկ, Նունիս, յՈրդվաւ րաթին կարգեալ: Սուրբն Գրիգոր յորժամ եկեալ

² Հմմտ. «Աթոսն մեր, որ է բազում պայծառութեամբ շինեալ եւ գահիւք զարդարեալ եւ անուամբ սրբոյն Թովմայի առաքելոյն կառուցեալ» (Մասիս, 1886, էջ 29, ուր հրատարակուած է՝ «Սուրբ եւ կոճ ի վերայ գիւղաքաղաքին Ազուլեաց, որպիսի լինելն»):

Ի Առաքելոյն նոմոս տեսեալ Չեռագրով զայն հաստատեալ, եւ նզովիւք ամբափակեալ, Յամի Տեառն Գձ եւ հինգ հասեալ, Լուսաւորչին պատճէն գրեալ Արձան գրիս, որ աստ եղեալ»:

(Ալիշան, Սիւսական, էջ 326. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 325. Ազգր. Հանդ., 1904, էջ 307. Փափաղեան, Հնութիւնք հայրենեաց, Թ. 288. Արաքս, 1893, Բ. յաւելուած, էջ 4: Անուններու ընթերցումի մէջ շատ տարբերակներ կան):

Այս արձանագրութեան վերեւը մեծ պատուհանի մը ներքեւ խոշոր տառերով «ՌձՈԳ» թուականը փորագրուած է: Իսկ դրան կողքին գրուած է՝ «Յիշատակ է դուռնս Դաշտեցի խօջա Սէթուն եւ ծնողացն Աստուա(ծա)տուրին եւ Սաթունջանին եւ եղբարցն. թվ. ՌձՈԳ»:

Արեւմտեան այս դրան առջեւ 1825ին Արաս Միրզա պարսիկ գահաժառանգին ծախսովը կը կանգնուի քանդակատուն մը եւ արձանագրութեամբ կ'օժտուի: Գժբախտաբար սոյն կառուցուածքը շուտով նորոգութեան կը կարօտի եւ Հախումեանները կ'ըլլան բարերարները՝ «Յիշեցէք այսինքն Ազուլեցի ի Շուչի բնակեալ Հախումեանց Սահակի որդիքն աղա Մնացական, մահտեսի աղա Մատթէոս, նաեւ Մարտիրոսի որդի աղա Թոմաս եւ որդիքն սոցին՝ Սահակին, Անդրէասին, Մարտիրոսին, Յարութիւնին եւ Առաքելին եւ զուք յիշողքը յիշեալ լինիք առաջի Աստուծոյ մերոյ, 1831 թուին շինեցաւ քանդակատունս»:

Տարիներ յետոյ քանդակատունը հիմնովին կը քանդուի եւ 1904ին ձեռնարկ կ'ըլլայ նոր մը շինելու (Ազգր. Հանդ., 1904, էջ 308—309):

Երկրորդ դուռը կը գտնուի հիւսիսային կողմը՝ շրջապատուած ոտմանական երեք կամարով: Անոր վերեւը քանդակուած է Պօղոս առաքեալը՝ մէկ ձեռքին մէջ գաւազան եւ միւսին մէջ Աւետարան եւ ներքեւը գրուած է հետեւեալ արձանագրութիւնը՝

«Ի թուականիս հայկականի, Մի յորեյեան երկշրջանի. Եռակ տասանց որով վարի (1695). Սա կառուցաւ քառանկիւնի. Չեռամբ Յոհան վարդապետի. Որ է յաջորդ յայսմ գահի,

Բազում ծախիւք անթուելի. Չորիւք ամօք սա կատարի. Երեք դրամբ ըստ խորհրդի. Կամարակապ զարմանալի. Անուամբ մեծին Սր. Թովմայի, Նման վերնոյնն (ըստ) Սիօնի. Սա մեզ շնորհեաց պարգեւ բարի, Չաստուածամուխ աջն ձրի. Ամուր պատուարք բոլոր թեմի, Պաշտօնէից իւր հովանի: Պարծանք է սա Գողթ գաւառի եւ ցնծութիւն Հայոց ազգի, Նպաստութեամբ Տեառն Յիսուսի, Ի փառս անուան մի եռակի»:

(Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 323. Ալիշան, Սիւսական, էջ 327—328. Ազգր. Հանդ., 1904, էջ 309):

Արեւմտեան դրան հարաւային կողմը — պատի վրայ — կայ այս արձանագրութիւնը՝

«Յիշեցէք ազուլեցի Քալանթար Ովանէսն, վանքիս վէքիլ Հայրապետն, մէլիք Ասկարխանն, մղտեսի Հայրապետն, Վարդանն, Առաքելն, Այէքսանն, Աղամջանն, Ովանէսն, Նահապետն, Մեղրոնն, Թասալին, Աղամիրդէն, Մատթէոսն, Ամիրն, Ղուկին, Մուշկին, Գուլպասարն, որք օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս»:

Նոյն դրան հիւսիսային կողմը պատին վրայ կը կարդացուի՝ «Յիշեցէք ուսմեցի խօջայ Աւետիքն եւ եղբարքն իւր Նաւասարդն եւ Նառնն եւ երէցփոխան Վարդանն եւ Գրիգորն եւ Պետրոսն, Փիրին, Նուրին, Արգանին, Վարդանն եւ Բարաքեազն, Գրիգորն եւ ակէր Գրիգորն, որ բազում օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս» (Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 324. Ալիշան, Սիւսական, էջ 329. Ազգր. Հանդ., 1904, էջ 308):

Երրորդ դուռը³ հարաւային կողմն է. սարգ եւ կամարակապ: Անոր կամարակապ քարին վրայ արձանագրուած է՝

«Իշխանութեամբ Պարսից ազգի, Շահ Հուսէին թագաւորի. Դիւանբէկութեամբ Մուսաբէկի, Որ էր տեղեաւ Ազուլեցի, եւ Յովհաննու առաջնորդի,

³ Երեք դռներուն վրայ ալ մէկական փոքրիկ քանդակատներ կանգնած են (Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 322):

վերախիստող յայտը թեմի,
Որոյ յաւուրս սա կանգնի՝
Այս վայելուչ եկեղեցի»:

(Շահխաթունեան, Ստորագրութիւն,
Բ., էջ 324. Ալիշան, Սիսական, էջ 328 եւ
Ազգր: Հանդ., 1904, էջ 309):

Այս դրան մօտ — դէպի ձախ — չորս
սիւներու վրայ կը բարձրանայ գմբեթ մը, որ
կը հովանաւորէ հոն ծրարուած ոսկրներ:
Հաւանօրէն այս եղած ըլլայ երբեմնի այն մա-
տուը, ուր ամփոփուած էին Սաչատուր
վարդապետի ածիւնները, որոնց վրայ ա-
ւանդութեան համաձայն Պետրոս առաջնորդը
մատուռ մը կառուցանել տուած է:

Ս. Թովմասի եկեղեցւոյն ներքինը սի-
րուն է: Քառակուսի սիւներու վրայ կը բո-
լորուին կիսաբոլոր կամարները, որոնց վրայ
կաթողիկէն կը հանգչի: Չեղուն ալ կիսա-
բոլոր է եւ ծածկուած գունաւոր ծաղ-
կանկարներով: Հիւսիսային եւ հարաւային
պատերուն մէջ կան արարական կամարներով
պահարաններ: Այս պահարաններէն մէկուն
մէջ գետեղուած է մկրտութեան աւազանը,
որ հետեւեալ արձանագրութիւնն ունի՝
«Քրիստոսի տիմար ծառա տէր Սաչատուր,
թվ. ՌՃԽԳ, Փրկիչ պաւա զՍոսոփրիոս»:
Բեմին արեւմտեան երեսը մարմարինէ է եւ
առաքեալներու պատկերներով ու ծաղկա-
նկարներով զարդարուն:

Հոս յարմար կը գտնուի յառաջ բերել
Մ. Փափագեանի յօդուածը, որ (թէպէտ եր-
կար է. սակայն) շատ լաւ տաճարին նկարա-
զրուութիւնը կ'ընէ «... Իսկ երբ այցելուն
մտնում է տաճարի մէջ, աւելի եւս հիա-
նում է նորա հրաշալի պայծառութեան վրայ.
Կարող ենք ասել համարձակ որ՝ ոչ մի տե-
ղում նմանը չկայ, թէգուց էջմիածնայ տա-
ճարից սկսած մեծն Հայաստանում գտնուած
մինչեւ ամենաառաջաւոր վանք, երբեք չէ
ունեցել այն գեղեցկութիւնը, պայծառու-
թիւնը, մաքրութիւնը, պատերի, առաս-
տաղի զարդարանքները, խաչկալի հիւսնայի
չինուածքը, ինչ որ ունի Թովմայ առաքելոյ
վանքը, միով բանիւ ամենայն ինչ կատա-
րեալ է. դեռ եւս մեր ճանապարհորդութեան
մէջ մինչեւ օրս չհանդիպեց մեզ տեսնելու
Նախավկայի արտաքին տեսքի եւ սոյն վանքի
տաճարի ներքին հիւսնայի գեղեցկութեան
նմանը: Յիբաւի արժանի է տեսնել իւրա-
քանչիւր Հայի. ինչու որ ամբողջ պատերը

կամարներից մօտաւորապէս 3 արշին ցածր
ներկուած է մարմարեայ քարի գոյնով, իսկ
կամարները որպէս եւ ամբողջ առաստաղը
զարդարուած են գեղեցիկ ոսկեգօծ գոյնզգոյն
ներկերով նկարուած արեւելեան ճաշակով
պատկերներով, որոնց իւրաքանչիւրը, եթէ
առանձին վերցնենք մի մի խաչ ենք ստա-
նում եւ մասամբ փունջ փունջ կազմած դո-
վեալ ծաղիկներ:

Իսկ կաթողիկէի առաստաղը ներկուած
է կապտագոյն իրբեւ երկինք, որի վրայ փայ-
լում են ոսկեգոյն աստղերը, բեմի սիւների
գլխին չորս անկիւններում երեւում են թեւա-
տարած չորս հրեշտակներ: Ունի աւագ մի
սեղան, որի երկնագոյն ոսկեգօծ սիւներն եւ
այլեւայլ զարդարանքներ ունեցող փայտա-
չէն խաչկալը մի նուրբ, մաքուր եւ գեղեցիկ
դործ է: Սաչկալի ամենածայրում աչքի է
ընկնում Ս. Սաչը, որի վրայ նկարուած է
թեւատարած Փրկիչը, երկու կողմերում
հրեշտակներ, որոնցմէ մէկը ձեռքին մէջ
բռնած է՝ սկիհ. միւսը՝ օրինաց տախտակ-
ները:

Սաչկալի աջ դրան գլխին կայ նոր ուխտի
նշանը՝ մի կողմում Ս. Աւետարանն, մէջ
տեղն սկիհ, միւս կողմը Ս. Սաչ, տակը՝
վակաս:

Ձախ կողմի դրան վրայ հին ուխտի
նշանը, մի կողմը պատուիրանաց տախտակ-
ները, մէջ տեղում խաչածեւ գաւազանը՝
օձը վրան բարձրացած, միւս կողմը սաղա-
ւարտ, սորանց տակը նոյնպէս վակաս:

Սեղանի առաստաղը ներկայացնում է
կապոյտ երկինք հանդերձ աստղերով, իսկ
խաչկալի ամենածայրում Փրկիչի խաչափայտի
ուղիղ գազաթին փայլում է ճաճանչաւոր ա-
րեգակը առաստաղի վրայ:

Բեմի առաջը բարձրացած է մարմարեայ
քարով, որոնց իւրաքանչիւրի երկարութիւնն
է մօտ երկու արշին, իսկ լայնութիւնը մէկ
արշին: Բոլոր քարերի վերին մասերում փո-
րագրուած եւ ներկուած է գեղեցիկ դոյն-
զգոյն նկարներ, վերջին երկու ծայրերում,
մարմարեայ քարերի վրայ՝ աստիճանների
տակ՝ փորագրուած է Ս. Ստեփաննոս Նա-
խավկայի պատկերը սարկաւազի գգեստով՝
(Փափագեան, Մ. Հնութիւնք Հայրենեաց,
Գ., Թ. 287):

Աւագ սեղանին աջ ու ձախ կողմերը
մէկական աւանդատուն չինուած է: Աջա-
կողմեան աւանդատնէն սանդուխտով մը կա-

բելի է բարձրանալ տաճարին վերնատունն
եւ առաստաղը: Հոս կը հետնուին եկեղեցական
զգեստներու պահարանն ու գրադարանը,
ուր հաւաքուած են հին ձեռագիր ու տպա-
գիր մատենաներ: Իսկ ճախակողմեան աւան-
դատան մէջ, որ թանգարան անունը կը կրէ,
կան շատ մը սրբերու նշխարներ: Հոն են
Թովմաս առաքելի եւ Ս. Յակոբի աջերը,
կենաց փայտի մասունքը, Գայիանեանց մա-
սունքը եւ ուրիշ շատ մը խաչեր — ոսկեջրած
ու արծաթապատ:

Թովմաս Առաքելի աջը ունի հետեւեալ
շխատակարանը (թղթի վրայ)՝ «Սուրբ աջս
սրբոյն Թովմայի առաքելոյն ի քանի ամաց
հետէ տարագիր գոյրով ըստ բերման Ժամա-
նակին եւ մնացեալ ի սուրբ աթոռս, այժմ
ըստ խնդրոյ գերջարգի մահտեսի եւ մայր-
անսի աղա Պապային Հախումեան, առաքե-
ցաք ի տեղին իւր՝ ի հրաշալի վանս սրբոյն
Թովմայի առաքելոյն, որ Այուլիս: 1821
յամի Տեառն ի 28 Յունիսի: Կաթողիկոս ա-
մենայն Հայոց վշտալի Եփրեմ»:

Այս թանգարանին մէջ ամփոփուած են
նմանապէս եպիսկոպոսական եւ վարդապե-
տական գեղեցիկ թաղեր, վակասներ, փո-
րուրարներ եւ եմփոփոններ — Կ. Պոլսէն եւ
Հնդկաստանէն բերուած:

Փորուրարի մը վրայ ներկայացուած է
Յակոբ նահապետն իր տանուերկու որդիներ-
ովը եւ վրան գրուած՝ «Յիշատակ է ուրարս
Վլդերխան (Կ. Պոլիս) եղեալ վաճառականաց
ի դուռն սուրբ Թովմայի առաքելոյն ի վայե-
լումն Յովհաննէս վարդապետին թվ. ՌՃԶ»:
Իսկ վակասի մը վրայ կը կարդացուի՝ «Յի-
շատակ է Պետրոս վարդապետին ի վայելումն
նորին աշակերտ Մատթէոս վարդապետին ի
դուռն Թովմայի (ՌՄԽԶ)»:

Եկեղեցւոյ մօտ շինուած են բաւական
թւով սենեակներ վանահօր, միաբաններու
եւ ուխտաւորներու համար, կան նաեւ ուրիշ
չէնքեր այլ եւ այլ նպատակներու համար:
Ս. Թովմայի բոլոր շինութիւնները պարիսպի
մէջ անուած են: «Պարիսպ մենաստանիս
է ուղիղ քառակուսի եւ տաճարն ի միջին
տեղուջ, ի ներքուստ ի չորից կողմանց սո-
պարսպօքն են զանազան շէնք կացարանաց,
սենեակքն Արքեպիսկոպոսի կամ առաջնորդի
վիճակիս են յանկեան արեւմտեան հիւսիսոյ
մեծ մասամբ քարաչէն եւ կամարակապ, մա-
նաւանդ ներքնայարկքն, սենեակք միաբանաց
կամ հիւրոց են առ հիւսիսային եւ արեւելեան

պարսպօքն, եւ խոհանոցն ընդարձակ գմբե-
թաւոր, յանկեան արեւելեան հիւսիսոյ, ուր
բղխի աղբիւր ականակիտ...»: Համբարանո-
ցին վրայ կը գտնուի «ուսումնարանն ման-
կանց բնակչաց այսր աւանի» (Շահխաթու-
նեան, Ստորագրութիւն, էջ 327: Վանքին
մասին հմմտ. անդ էջ 322—329, ինչպէս եւ
Ալիշան, Սիսական, էջ 326—329. Փափա-
գեան Մ., Հնութիւնք Հայրենեաց, Գ.,
Թ. 286, 287, Ազգր. Հանդ., 1904, ԺԱ.,
էջ 306—311, Էփրեկեան, Բնաշխ. Բորն.,
Բ., էջ 13—18 կամ Բագմավէպ, 1899,
էջ 70—72, Սմբատեան, Երնջակ, էջ 489 եւ
էն, եւ համառօտ նորագոյն գրութիւն մը՝
Գաղութահայ Տարեգիրք, Գ. տարի, 1941,
էջ 109—110):

Աւանդութիւնը Ս. Թովմասի վանքին
հիմնադիրը կը ճանչնայ Բարթողիմէոս ա-
ռաքելը՝ «Բարթողիմէոս ի Հայս եկեալ,
գտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ, սուրբ
Թովմայի առաքելոյն անուն կոչեալ» (հմմտ.
վերը): Հ. Ալիշան շատ խելացիօրէն դիտել
կու տայ՝ «Ի դէպ է համարել, եթէ այսպիսի
ինչ կայր աւանդեալ ի գաւազանս եկեղեց-
ւոյն, ըստ բանից պատմչին Սիւնեաց եւ անտի
սուեալ նորոգողաց տաճարին այսու ոճով
փոխարեւոյն ի ճակատ նորին» (Սիսական,
էջ 326. հմմտ. Արաքս, 1893, Բ., յաւե-
լում, էջ 4): Սմբատեանի համաձայն այս
վանք-եկեղեցին Բարթողիմէոս 56 թուակա-
նին կը կառուցանէ եւ 315ին Ս. Գրիգոր Լու-
սաւորիչ առաջին անգամ զայն կը վերանո-
րոգէ (Երնջակ, էջ 489): Գուցէ նա այս
եղրակացութեան եկած ըլլայ վերը յառաջ
բերուած արձանագրութենէն:

Ս. Թովմայի վանքն ըլլալով Գողթն գա-
ւառի եպիսկոպոսանիստ աթոռը սոյն գա-
ւառի եպիսկոպոսներն եղած են նմանապէս
վանքին առաջնորդները, որոնք սակայն բնա-
կանաբար անոր վերին վարչութիւնն ու
հսկողութիւնն իրենց ձեռքին մէջ ունեցած են,
իսկ ներքին վարչութիւնը վստահացած են
ուրիշի մը: Իրբեւ այնպիսի Շահխաթունեան
Ս. Թովմայի եւ Գողթն վիճակի առաջնորդ-
ներու հետեւեալ ցանկը կազմած է՝

Բարթողիմէոս առաքել.
Կոմսի աշակերտ Բարթողիմէայ առաքելոյ.
Բարեւա եպիսկոպոս՝ յաջորդ Կոմսեայ
Մովսէս եպիսկոպոս, կարգեալ ի Գրիգոր
Լուսաւորչէ, որում եւ յաջորդեցին
Սահակ Տեքօնեցի.

- Զրևանդատ.
- Ստեփանոս.
- Յովհաննէս.
- Սիոն (մասնակից Դենոյ ժողովին, 594ին).
- Մարտիրոս (անդամակից Կարնոյ ժողովին, 628ին).
- Եսայի (մասնակից Պարտաւի ժողովին, 768ին, սակայ յիշուած մատենագիրներէ).
- Խաչատուր վարդապետ (Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի օրով).
- Պետրոս կաթողիկոս (հրաւիրող Եղիազար կաթողիկոսի).
- Յովհաննէս կաթողիկոս (կաթողիկոսական առժամանակեայ տեղապահ).
- Սիմէոն կաթողիկոս (որմէ վերջ 1837ին այս մենաստան... թուեցաւ ընդ մենաստանս վիճակին Երեւանայ):
- (Ստորագրութիւն, Բ., էջ 329. հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 215, Սուրհանդակ, 1900, Թ. 274, Բաղմալէպ, 1900, էջ 151—152, քաղուածոյք՝ հայ մատենագրութիւններէ):
- Աւելորդ է ըսել որ Շահխաթունեանի այս ցանկը շատ պակասաւոր է: Հ. Ալիշանի ցուցակը աւելի խնամով է՝ (Բարթոլոմէոս)
- Կուսի.
- Բարեբա.
- Մուշէ.
- Մովսէս Տարօնեցի.
- Սահակ Տարօնեցի.
- Զրուանդատ.
- Ստեփանոս.
- Յովհաննէս.
- Մուշէ, 500—550.
- Անաստաս, 550—580.
- Սիոն, 594.
- Մարտիրոս, 628.
- Եսայի, 768—773. յետոյ կաթողիկոս.

Յժ դարէ գրեթէ ցժ. Դ ոչ յիշեն կաթողիկոսը Գողթան, յայտ է զի ընդ մետրապոլիտ Սիւնեաց զորով գրաւեալ, այլ յայնմհետէ դարձեալ երեւին անկախք ի Սիւնեաց կամ ի Տաթևոյ թեմէն եւ են ծանօթքն ինձ, ընդհատ ժամանակօք.

Սարկաւազ, 1280—1300.

Տէրունական, 1424.

Խաչատուր, 1669.

Պետրոս, 1680.

Թովմաս Վանանդեցի, 1691—1712.

Յովհաննէս, 1708.

Թովմաս, 1737.

Յովհաննէս, 1740.

Սիմէոն, վերջին կաթողիկոս 183... զի յամի 1837 բարձաւ աթոռ կաթողիկոսութեանն եւ կարգեցան լոկ առաջնորդք, յորոց յետինք են՝

Յակոբ վ., 1870.

Կարապետ վ., 1871.

Անանիա վ., Համադասպեանց, 1881.

Գրիգոր եպ. Աղափերեան, 1883»: (Միսական, էջ 312—313):

Առաջին շրջաններու համար զիտել կուտամ որ՝ պէտք է յաւելուլ Յոյս կաթողիկոսի անունը, որ Ներսէս կաթողիկոսի ձեռքով կատարուած Հայոց աշխարհի միաբանութեան ուխտին կը մասնակցի (հմմտ. Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 73): Ժ. Դ. դարէն վերջ եկած շրջաններու վրայ աւելի պիտի ծանրանամ, վասն զի բուն այդ առնչներն է որ՝ Ս. Թովմայի վանքը իրրեւ իսկապէս վանական հաստատութիւն ի յայտ կուգայ եւ տեղ կը գրաւէ:

Վարդան արեղայ 1375ին կ'արտադրէ Նարեկ մը՝ «ընդ հովանեաւ սուրբ Թովմայիս, որ է ի վանսն ի Ագուլիս, ընդ իշխանութեամբ տէր Զաքարիային, որ Հայրապետ էր Գողթն գաւառին» (Մճրատեան, Երնձակ, էջ 179 եւ Կարենեան, Յուլ. հայ. Ձեռ. էջմ. 1526):

Հ. Ալիշան այս Զաքարիա հայրապետը չէ յիշած, բայց յիշատակած է Տէրունական, որուն օրով 1424ին Մատթէոս վարդապետ կը գրէ Հարցմանց գիրք մը ուր՝ Տէրունականի մասին կը վկայուի՝ «... ի նեղ եւ յետին ժամանակիս առաջնորդ եւ լուսաւորիչ է եկեղեցւոյ եւ քաղցելոց կերակրիչ եւ աղքատաց միտիթարիչ, գերեաց ազատիչ եւ ամենեցուն սիրտիչ»: Վանքին մէջ կային այդ ժամանակները՝ քաջ եւ արդիւնական բարունապետ եւ հոգեւոր հայր եւ վարժապետ Յակոբ, Յակոբ արեղայ, Բարսեղ շնորհալի գրագիր, Յովհաննէս եկեղեցապան, Ստեփանոս հայր վանաց, Սատոն, Մկրտիչ եւ Փարուիս (Ալիշան, Միսական, էջ 326): Քանի մը տարի յետոյ՝ 1432ին՝ «Գծագրեցաւ պատմադիրս այս... (Միքայէլ Ասորի, Վարդան եւ Կիրակոս) ի թուիս ՊԶԱ ձեռամբ

մեղսաներկ եւ անարհեստ գրչի Թովմայի՝ սիրողը գրոցս եւ ծնողացն իմոց Սիմէոն քահանայի եւ մօրն իմոյ Սայինին: Արդ գրեցաւ սա ի վանքս Ագուլեց առ դրան սուրբ առաքելոյս Թովմայի, որ է աթոռ Գողթեան գաւառիս ի թագաւորութեան պիղծ ու անօրէն եւ այլազոր Սկանտարիս եւ ի կաթողիկոսութեան Տեառն Կոստանդեա(յ) եւ ի վերադիտողութեան սուրբ հայրապետիս մերոյ Տէր Տէրունականայ» (Ալիշան չ. Ն., Հաւաք. Յիշատ. Tübingen, Թ. 70):

Երկու տարի վերջը (1434) Ստեփանոս քահանան Աւետարան կը գրէ ու կ'ընծայէ Ագուլիսի վանքին՝ «Ի կաթողիկոսութեան տէր Կոստանդեա(յ) եւ ի հայրապետութեան... Տէրունականայ եւ բարունապետին մեծ փառքերային Միտիթարայ եւ հարազատ աշակերտացն: Արդ ես Ստեփանոս հայրապետս... ընծայեցի զսուրբ Աւետարանս սուրբ Առաքելոյն Թովմայի...: Յիշենք եւ զամենայն կղայրութիւնս... զտէր Յակոբ եւ զտէր Բարսեղ քաջ քարտուղարն... նաեւ զկազմող սուրբ Աւետարանիս զՄիտիթար կուսակրօն արեղայն...» (Ալիշան չ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 1693): Դարձեալ երկու տարի յետոյ (1436) Յովհաննէս՝ «... ի վանքս յԱգուլեաց ընդ հովանեաւ սուրբ Թովմայիս» կը գրէ Ս. Թէոգորոս զօրավարին պատմութիւնը (Ալիշան, Միսական, էջ 326):

Ասկէ վերջը Հ. Ալիշանին 200 տարւոյ պատմութիւն «անձանօթանայ» Ս. Թովմասի վանքի մասին (անդ, էջ 326): Բարեբաստօրէն մեղի ծանօթ են սոյն վանքին նկատմամբ բաւական բաներ — այդ շրջանէն: 1447ին Տօնական մը կը գրուի եւ կը մաղթուի յիշել՝ «Ստացաւ սուրբ Տաւնականիս տէր Ստեփաննոս Գողթան վիճակիս՝ նախնեան իւրով տէր Տերունականաւ» (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 120—123): Այսպէս Տէրունականի յաջորդն է Ստեփանոս եւ հաւանականօրէն անոր յաջորդած ըլլայ Ագարիա կաթողիկոսը, որ 1476ին կազմուած Աւետարանի մը յիշատակագրութեան մէջ կը զովուի՝ «երջանիկ, պատուելի, փառաւոր արհիպիսկոպոս» (Արարատ, 1911, էջ 388): Նա այնպէս կը թուի թէ 1477ի սկիզբը կամ նախորդ տարւոյն վերջերը առաջնորդութենէ կը հրաժարի եւ անոր կը յաջորդէ Սիմէոն եւ կամ օգնական կ'ըլլայ՝ «Արդ նորոգեցաւ սուրբ Աւետարանս... ի հայրապետութեան մերում գաւառիս Գողթան տէր Սիմէոն ար-

հիպիսկոպոսի ժրաջան եւ քաջ մշակի վերնուն Սիոնի: Եւ միաբան եղբարքս եւ սպասաւորքս եւ շինարարքս սուրբ ուխտիս, որք կան առ ոտս սորա բնակեալ՝ զտէր Բարսեղ արեղէն, զտէր Ագարիա սիրին (սօրին) եղբայրորդին, զտէր Հայրապետ արեղէն Տէրունեցի՝ հայրապետ վանիցս, զտէր Յովհաննէս արեղէն Խիկարեցի յիշեցէ(ք) ի բարի: ԶՅօհաննէս երէց Գրտընեցի յիշեցէ(ք) ի Գրիստոս: Զտէր Յովսէփ արեղէն յիշեց(էք) ի բարի: Եւ զտեսնս պապն աշխատաւոր վանիցս յիշեցէ(ք) ի բարի եւ զնշին հոգս՝ զհնազանդս զկազմող Աւետարանիս Անանիայ արեղէս սուտ անուամբս, որ իմ (եմ) իրրեւ զմի ի փոքրագունից սպասաւորաց տեսնս մեր Սիմէոնի: Ի թուականութեանս հայկազան սոււմարի ԶԻԶ (1477): Դարձեալ փառաւոր պատուով եւ ծածկուցով պահէ զսուրբ Աւետարանս Գուլում եղբայր. զԱնանիէս յիշէ...» (Ալիշան չ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 210):

Սիմէոնի ժամանակ՝ 1481ին կ'աւարտի Յայսմաւուրքի մը արտագրութիւնը՝

«... Աւարտեցաւ... սուրբ տառս (Յայսմաւուրքս) ի յամի Զ եւ Լ (1481) ի մայրաքաղաքի Արգուլեաց... առ ոտս վերադիտողի վիճակիս Գողթեաց տէր Սիմէոն արքեպիսկոպոսի ի ինքորոց բարեմիտ հոգիընկալ պարոն Նուրիճանին...: Տէր Սիմէոն արքեպիսկոպոսն Ագուլեաց իւր ամենայն միաբանեալքն մեծ երախտաւոր եղին մեզ եւ պատճառ սուրբ գրոցս սիրով մեծարեցին զիս եւ ամենայն ժամ սպասաւորէին...: Ա՛ կարէ պատմել թէ զինչ առնէին զիս ծառայելով եւ ես չէի արժանի այն փառաւոր եւ կայծակնամարտ սուրբ եւ ընտրեալ կրաւնաւորացն Տէր Բարսեղին, Տէր Ագարիային, Տէր Ովանէսին, որ բազում աշխատանաւք զթուղթն կոկէր, Տէր Հայրապետին եւ փակակալ Տէր Շմաւոնին, Անանիէին, Յակոբին, Թաղէոս սարկաւազին, Պապ տընտեսին: ... Յաւգնականութեամբն Տէր Ագարիայի, տէր Դուկաս արքեպիսկոպոսաց...» (Մճրատեան, Երնձակ, էջ 299—300⁴):

Ինչպէս կը տեսնուի այս յիշատակարանին մէջ կայ նաեւ տէր Ագարիայի անունը, որ 1489ին եւ 1493ին առանձին կը յիշուի եւ Սիմէոնի մասին խօսք չըլլար. 1489ին Աւետարան մը կը գրուի Բուստի անապատին

⁴ Ագար. Հանդէս ի մէջ (1904, ԺԲ., էջ 171—172) տարեթիւր գրուած է Զ եւ Լ, 1488:



մէջ՝ «Եւ ետուն գրել զսուրբ աւետարանս ի Թ. ՁԼԸ իշխանութեամբ Գողթան վիճակիս տէր Ազարիայ եպիսկոպոսի» (Մճբատեան, Երնջակ, էջ 274): Իսկ 1493ին «ի վանքս Ազուլեաց, ի հայրապետութեան Ազարիին ձեռամբ Յովսէփ մեղսասէր արեղայի» կը կազմուի Մաշթոց մը (Ազգբ. Հանդ., 1904, ԺԲ., էջ 166): Այս յիշատակարաններէն կարելի է եզրակացնել, որ Միմէոնին մահէն վերջ Ազարիա յառաջ վարած է Ս. Թումայի առաջնորդութիւնը եւ կամ որ անկարելի է, համարել թէ Միմէոնի նախորդին եւ յաջորդին անունները Ազարիա եղած ըլլան:

ԺԶ. դարէն ծանօթ են հետեւեալ երկու առաջնորդները՝ Գրիգոր եւ Աւետիս: 1552ին «ի յաթոռակալութեան սուրբ Թումայի առաքելոյն ղեռաբոյ(յ)ս եւ մեծահազակ հրաբունի եւ արհեսպիսկոպոսի Տէր Գրիգորիս» կը նորոգուի Աւետարան մը (Մճբատեան, Երնջակ, էջ 311) եւ ուրիշ Աւետարան մը կը վերակազմուի 1593ին (ՌՍԲ, տպուած սխալ՝ ՌՍԲ) «... ի դուն սուրբ Միոնին եւ սուրբ Յակոբի... ի առաջնորդութեան սուրբ Թումայի առաքելոյ աթոռոյն տէր Աւետիսին» (Արարատ, 1911, էջ 562):

Ս. Թովմասի վանքին յաջորդ շրջաններու պատմութիւնը պայծառ է եւ ընդարձակ: Այս ժամանակի հոգաբարձու առաջնորդներէն մէկը կը հանդիսանայ Խաչատուր վարդապետը, որ բուն թափով աշխատանքի կը յծուի վանքին ու թեմին վերականգնումին ու ծաղկումին: Նա արդէն 1633ին առաջնորդ կը յիշուի: Սոյն թուականին Տրամադիտութիւն մը կը գրուի եւ Խաչատուր «ճաշոց Տարեգրի» Ս. Թովմայի կը նուիրէ (Աճառեան Հ., Յուշ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 95, Մճբատեան, Երնջակ, էջ 204—205):

Խաչատուր վարդապետը Մովսէս Սիւնեցի կաթողիկոսէն ժողովրդեան բուն ցանկութեան վրայ Գողթնի առաջնորդ կը նշանակուի եւ «ԼԳ ամ սպասաւոր» կ'ըլլայ Ս. Թովմայի եւ 1664ին կը մեռնի (Մճբատեան, Երնջակ, էջ 209):

Տրամադրութեանս տակ ունիմ ընդարձակ յիշատակազրուութիւն մը, որուն մէջ մանրամասնօրէն հաղորդուած են այն նպատակները, որոնց մէջ նա առաջնորդութեան պաշտօնին կը կոչուի եւ այն արգելաւիճակ ու բեղուն գործունէութիւնը, որով նա իր վրան գրուած յոյսերը կ'արդարացնէ, մանաւանդ վանքին նորոգումովը: Սոյն յիշատակա-

զրուութիւնն իր կարեւոր բովանդակութեան համար ամբողջապէս կը հրատարակեմ՝

«Փառք... արդ զճազրեցաւ աստուածային մատեանս այս որ կոչի Հարցմանց գիրք, արարեալ... Գրիգոր բարունապետի, որ գաւառաւն Տաթեւացի որջորջի...: Եւ եղև զբաւ աւարտման սորա ի յերկիրս Գողթան ի գեօղս Փառակայ ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ ուխտիս... ի կաթողիկոսութեան Հայոց սուրբ էջմիածնին Տեառն Փլիպպոսին քաջ բարունապետի Հայաստանայց ազգի: Եւ ի հայրապետութեանն երիցս երանեալ տէր Խաչատուր վարդապետի, որ ստացաւ զսուրբ Հարցմանց գիրքս յիշատակ իւրն...: Արդ աւարտեցաւ գիրքս այս ի հայկազան թվականիս ՌՁԷ (1638) ձեռամբ... փճուն գրչի Մարտիրոս... քահանայի... ի դառն եւ յետեալ ժամանակիս, որ քրիստոսն ի ներդրութիւն եւ ի չարչարանք կամք ի ձեռս այլազգեաց վասն բարձր մեղաց իմոց... վա՛յ ինձ: Փառք... Արդ ի թուականութեանս հայկազան ՌՁ. ի հայրապետութեան մերս սեռիս Տ. Մովսէս կաթողիկոսի եւ երկրորդ Լուսաւորչի: Որում ժամանակի կրկնակի լուսաւորեցան Հայք, զի փայլէր նա որպէս զարեգակն ի մեծ եկլեւսիստին եւ անդուստ լուսատու ճաճանչօքն իւրովք, այսինքն ընտրելովքն Աստուծոյ եւ աշակերտեալ վարդապետօքն իւրովք լուսաւորէր զազգս մեր: Որոյ գորով աշակերտ եւ որդի հարազատ դիեցեալ ի նմանէ կաթամբ բանիցն Աստուծոյ, տէրս իմ քաջ հոկտոր եւ աստուածաբան վարդապետս Խաչատուր ստորոգիցեալս, որ եւ տեառն իւրոյ հաւանական ընտրութեամբն եւ հրամանաւ նորին վարդապետական եւ եպիսկոպոսական իշխանութեամբ առաքեալ եղև ի գաւառս Նախիջևանու եւ Գողթան, ի քաղաքս, ի գիւղս եւ յաւանս (յա՛ոս) յաղազս քարոզութեան բանին Տեառն: Եւ ոչ թէ վիճակի յաղաղաւ, այլ զի ժամանակ ինչ աստուածաբանական վարդապետութեամբն իւրով եւ ուղղափառ դաւանութեամբ կանգնեցէ զգլորեալսն... որ եւ արար իսկ...: Եկն եհաս ի գաւառս Գողթան ի աստուածաշէն եւ աստուածաբանակ գիւղաքաղաքս յԱզուլիս: Ընդ որս եւ ընդ առաջ եղեն նմա արք եւ կանայք, ծերք եւ տղայք, երիտասարդք եւ մանկունք ըստնդեայք ըստ Տեառն եւ տարեալ յօթեցին յեկեղեցին Քրիստափորի, որոյ յանունն շինեալ կա(յ): Եւ արարեալ ընդունելութիւն

ոչ սակաւ, այլ իբրեւ յԱստուծոյ առաքելոյ: Ձի աստուածաբանական տրամաբանէն զամենեսեան զարմացոյց հանդերձ զօրօքն երկնաւորօք, եւ ոչ թէ ըստ Արիստոտելի ձեմականաւն միայն շատանայր, այլ եւ ի տրամաբանիւն զարտասուան իբրեւ յառու հեղուին: Չայս տեսեալ ժողովրդոցն ամենից. անուանեցին զնա կայծակ. եւ ըստ Յոհաննու ապաշխարութեան վարդապետ. եւ ամենեքեան որք պային առ նա խոստովանութեան յաղապաւ զամենեսեան ապաշխարութեան փութացուցանէր եւ ինքնին արտասուովք լուանայր զմեղս նոցա...: Եւ քանզի զայսոսիկ տեսեալ այլ ոչ եւս կամեցան մեկնիլ սմա յայսմ վիճակէ, այլ զնացեալ առ հայրապետն մեր խնդրեցին ի նմանէ տալ առաջնորդութիւն եւ հովու(ու)թիւն նոցա: Եւ ասեն ոմանք թէ՛ ինքնին տէր սորա յառաջագոյն խոստացեալ լինել ուխտիւք զսա առաքել յայսմ վիճակ որ եւ արար իսկ, զի ըստ խնդրոյ նոցին եւ ըստ վաղընջոյ խոստմանն իւրոյ, ետ որդեակին իւր հովու(ու)թիւն գաւառիս Գողթան: Եւ սա ոչ առնոյր յանձն...: Իսկ պատրիարզն մեր եւ կաթողիկոսն տէր Մովսէս ոչ հաւանեալ կամացս...: Եւ ի դառնալ սորա առ տէր իւր, բռնա(ղ)բօս զսա ետ նոցա տեսուցս եւ կրկնակի աւրհնութեամբ նամակաւ եւ կոնդակաւ աւանդականաւ առաքեաց ի յայսմ նահանգ: Ընդ որս եւ բիւրասպատիկ քան գաւառիսն գտեալ ընդունելութիւն եւ ըստ յառաջոյն ընդ առաջ եղեն սմա եւ բերեալ յայսմ մենաստան: Չոր կայր ի սմայ աջ սուրբ առաքելոյն Թումայի միեցելոյ ի կողմն Յիսուսի կենարարին եւ սրբոյ Յակոբայ սուրբ Նշանն փայտեայ շնորհեցեալ ի հրեշտակէ անտի: Ի փայտէ նոյեան տապանէն, յորմէ արարեալ նշանն փոքրագոյն ողորմութեամբն Աստուծոյ աստ գտեալ լինէր: Ընդ որս եւ վարդանա սպարապետի Հայոց սուրբ Նշանն ունելով ինքեան ի խաչափայտէն Քրիստոսի: Եւ Հոսիսիմեանց սուրբ Նշանն եւ այլ սրբոց նշանք, որք աստ կային: Ընդ հովանեաւ սոցա նստաւ յաթոռ արքեպիսկոպոսութեան տէր Խաչատուր հեղինակն ի թվարեութեանս Հայոց ՌՁԱ. ի հայրապետութեան մերոյ ազգի տէր Մովսէս հոգեւոր ծնողին իւրոյ: Ի թագաւորութեանն Պարսից Շահ-սաֆոյն եւ Հոռոմոց սուլթան Մուրատին եւ ի բռնակալութեան յայսմ աշխարհի Գալբալի պարսիկ խանի:

Եւ տեսեալ զսա վայր գեղեցիկ եւ զգիւ-

ղաքաղաքս ասեմ որում բնակեալ կան Աստուած յար եւ Քրիստոսադաւան քահանայք եւ ժողովուրդք...: Եւս զմենարանս ասեմ յորս շինեալ կայր ի սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսէ փոքրիկ խրճիթ անուանակոչութեամբ սուրբ առաքելոյն Թումայի եւ եթէ ենթակայ վայրս ասեմ զոր գովեալ կա(յ) ի հրեշտակաց սրբոց. այլ եւ ի հրեշտակացելոց, զի քառեակ կողմ տանս սորա դրախտ գով վայելուչ. եւ երանեն գետ եւ աղբիւրք ի հիւսիսոյ կողմանէ եւ դա(յ) ոռոգէ զբնաւսն, զի որպէս ի յադենէ երկերկեակ գետք կամ սղբիւրք այսպէս եւ զսորայն ի կողմանէ հիւսիսոյ երկեակ աղբիւր ելեալ եւ երթա(յ) մի յարեւելից կուսէ եւ զմիւսն յարեւմտից ի ներքոյ պարսպացն...:

Բայց զշինութիւն մակենթակայիս կայր թէպէտ առաքելաշէն... այլ հնացեալ եւ խահրեալ եւ ի հազար կամ աւելի ամանակաց կարկատուն առնելով առ մեղս հասեալ կայր զյորման: Եւ կեցեալ ի խոհակիրանոցէն զտունն Աստուծոյ եւ զառաստաղ նորին իբրեւ գնորայն սեւացեալ լինէր ի ծխոյ թոնրաց: Եւ փոխանակ անուշահոտութիւն խնկոց եւ կինամոնաց (ս)տաշղից եւ կնդրկաց զհոտ ձենձերայից զոհից կայր եւ փոխանակ դաստառակի զսիւնն էին զործածեալ ի մաքրումն ձեռաց եւ փոխանակ ձայնից սաղմոսաց եւ երգո(ւ)ց երաժշտականաց ի մէջ եկեղեցւոյն ճարճատմունք եւ որոտմունք ձուղեղաց լինէին եւ զփրկազործ պատարազն ասեմ զոր կատ(ար)ելով (կատակելով?) առնէին զի փակեալ շրթուս ի խորհրդոյ զրոյն ելք եւ էջք առնէին: Բայց վասն կատակերգութեան արձակ լինելով շրթամբք եւ զկնկուզան ի գլուխն ունել ի սուրն աստուածային մերձենալով: Որ եւ սրով հոգոյն խոցոտեալ եւ խողխողեալ սատակեցան եւ բնաշինջ յեալ մնացին եւ ոչ մի: Եւս եւ զհնձանն կենաց ասեմ, զի էր իբրեւ զհնձան մարմնաւոր ի մէջ այգոյն առանց պարսպաց: Եւ զբնաւսն այսպիսի թշուառութիւն կայր: Ըստ նախկին ասացելոյն ոչ գոյր մի ի թշուառացելոցն յայնցանէ, բաց ի չար յիշատակաց նոցա: Ձի ոմանք ի վերացուցանելոյ խնամոցն Աստուծոյ զմիմեանս զենին եւ ոմանք ի խորխանս պատուոց գեղապետք լեալ էին եւ ոմանք ինքնակամ յօժարութեամբ զինքեանս արտագրեալ էին եւ այլքն ի տարազիւր լինելն յաղազս ձիւմարթութեան եւ հեծանելոյ ի կիսիւնոց անկեալ չարաչար կտրտանօք վեր-

Չացեալը յայսմ կենաց: Իսկ սուրբ ուխտս այրի եղեալ ի նոցանէ սպասէր սրբոյ փեսայիս, որպէս կոյս ոք որ սպասէ փեսայի իւրոյ: Եւ յորժամ եկն ետես զհարսն իւր այսպիսի թշուառութեան եւ աղքատութեան ջան դրեալ փութայր զարդարել զհարսն իւր: Որ եւ ի մի ամն ի կատար չէ եւ եւս հասեալ սկսեալ առաջնորդութեամբ սուրբ Հոգոյն ձեռնարկութենէ շինութեան պարսպաց սուրբ ուխտիս եւ ի այն ամանակի եկն բոթ սգոյ վասն փոխելոյ յայսմ կենաց տէր Մովսէս երկրորդ լուսաւորչին մեր եւ հարաւոյ ի կողմանէ տեառնս մեր ընդ որս սուգ բազում կոծ յորով եւ մեծագոյն եթող մեզ եւ յաշխարհի: Եւ յաջորդեաց զինի նորին յաթոռ պատրիարքութեան տէր Փիլիպպոս խարագնադեացն, որ եւ վարիւք մաքուր դու իրբեւ զծնուն իւր ըստ հոգոյ:

Ի սոյն ժամանակի զհինն պարսպիս փորեալ լինէր, յորժամ եկն զբոթալի գրոյցն եւ ի սոյն ամի ի հիմանց պարսպին նորոգեաց: Երկրորդ ամին զպակասն ելից այսօրիւկ, նախ առաջի ի սենեկացն սկիզբն մինչեւ ի խոհակերանոցն հասուցեալ, զխոցսն ասեմ, զոր եթէ ի այլազեաց գա(յ)ին ի տեսութիւն ունի տիս երանելով երանէին ի ներկացողացն եւ ցանկանային եթէ իցէ հնար վասն նոցայն բնակութեան թող թէ եւ զքրիստոնեայնս եւ զտեղի մարմնաւոր սեղանոյ, զոր մակ ունի զբարձր եւ զլուսանմայ (sic) ապարանսն, որ եւ մերս ազգ եւ այլք քաւչի ասեն եւ զխոհակերանոցն եւ երկմուտ բախս նորին եւ ի դրանն յաղբիւրն յորդահոս ընդ որս եւ արտաքուստն ասացից, որ զինի սուրբ եկեղեցւոյն շինեցաւ, այսինքն զհիւրանոցն եւ ի վերոյ գբուչին, զգումսն եւ զամբարս նոցին այսօրիւ լցեալ:

Իսկ ի մեծ թվականութեանս Հայոց ՌԶԳն սկսեալ շինել զեկեղեցին եւ ի արկանել հիմանցն դարձեալ եկն զրոյցս փոթալիւրս, եթէ գա(յ) թագաւորն Հոռոմոց ի վերայ Պարսից մերս թագաւորի Հ. բիւրովք: Որ եւ եկն իսկ երկիրն Արարատեան եւ պատեալ զգլխակն Երեւանու՝ նստաւ: Եւ աշխարհս բնաւ տեղաշարժ լեալ, ոմանք փախուցեալ ի լեբինս եւ բլուրս չրջին, ոմանք ի խորախիտս վիմաց եւ ոմանք ի վիհ եւ ի խորագոյն ձոր մտին եւ այլք ի գլուխ բարձրաբերձ լեռանց ելեալ խորշակահարք եւ կիզեալք ի տօթոյ արեգականն, զի թերեւս կարեցին զինքեանս ապրեցուցանել: Իսկ տէրս մեր եւ

ծառայք նորին գուն գործեալ հոգւով չափ ըստ առաքելոյ ոչ երանել աստի մինչչեւ աւարտեալ իցէ մեր զխորանն սուրբ, զի թէ եւ մահ եւս պատահեցէ, եւ ի դալ հասանել ի տեղի կամարաց եւ ծածկէր երրորդ խորանացն առեալ լինէր զղեակն այն, զոր ասեն եթէ ի կատարել է. աւուրց ետուն կամաւ իւրեանց զամրոցն, վասն ոչ լինելոյ կարող ընդդիմանալ նմայ: Քանզի յելանել զօրացն Պարսից ի գլուխ զղեկին յաղազս պատեալով, զորովայնս նոցա արիւն փոխեալ լինէր վասն տեսութեան անհուն բանակացն Օսմանից: Եւ ի առնել զղեկին, եզ անդ զմի ի ծառայից իւրոց որոյ անունն Մուրթուրայ փաշայ ստորոգիւր. բազում ընտիր զօրօք եւ զպարսիկ խանն թահմազդուլի զերի ածեալ առաքեաց յաշխարհն իւր:

Եւ ինքն զհետ եղեալ թագաւորին Պարսից չու արարեալ եկն եհաս ի քաղաքն Դաւրէթ, ոչ ոք եզիտ ի Պարսից անտի եւ ոչ մի եւ զի ոչ ոք գայր ընդ առաջ իւր եւ ոչ ուրեքն իմացեալ լինէր եւ չուեալ զարձաւ ի տեղի իւր: Եւ տէրս մեր հաղիւ կարաց ի կատար հասուցանել զեկեղեցի, բա(յ)ց ոչ զընաւն վասն զժնդակութեան ամանակին, զի արարիչն սորա երկվարն պատրաստի պահէր եւ ի լսել բոթալիւր զրուց ստուգից կամ ստոց հեծեալ զերկվարն անհետս լինէր առ ձորովս, ընդ որս մշակնս եւ մեք մտեալ զհետ նոցա հեծեալով մի մի ի նոցանէ գտեալ ածէաք ի գործ եկեղեցոյն եւ զիպեալ լինէր այնպիսի որ որ անդամս երկ եւ երիս փախտական լինէին ճարտարապետն եւ մշակքն, այսպիսի նեղութեամբ յաւարտ եղեալ մնացեալ լինէր սպիտակացուցանելն:

Եւ ի գառնալ սուլթան Մուրատին Դոնուկ սուլտան մի Շապան անուն յորժորջեալ ժողովեալ ի վերայ իւր զսիւնի տաճիկք աշխարհիս այսմիկ եւ եկն ի գաւառն Նախիջևանու եւ զիմեալ ի քարանձաւն, զոմանս քարավէժ արարեալ ի քրիստոնէից եւ զոմանս սրախողիտոյ արարեալ եւ զայլսն ձերբակալ արարեալ հանդերձ աւարաւ առեալ էանց ի Կարնոյ քաղաք եւ յերկիրն Հոռոմոց, իսկ ո՛ր կարէ պատմել եթէ զինչ կամ որպիսի նեղութեանց զիպեալ լինէին ազգ քրիստոնէից վասն մերս բազմութեան մեղաց:

Յետ այսոցիկ եւ թագաւորն Պարսից արարեալ ժողով զօրաց իւրոց եկն եւ նա ի վերայ զղեկին Երեւանու եւ նստաւ ի վերայ նորա իբրեւ ամիս Ե. եւ սայ եւս ժողովեալ

ազգ քրիստոնէից վասն իւրոյ օգնականութեան եւ անդ զբազումս ի մերս սեռից ի զղեկէ անտի սպանեալ մեռան եւ բազում հայրս՝ անորդի թողեալ եւ յորով մայրս՝ անզաւակս եւ յոգնակի քոյրս անեղբայրս...:

Եւ ի մուտ Զ. ելոց ամսոյն առեալ եղեւ զարձեալ ի Պարսից զամրոցն վասն քաջապէս մարտի նոցա ի ձեռաց Օսմանից: Իսկ փաշայն Մուրթուրայ սրտակտուր եղեալ ներ զղեկին սատակեցաւ եւ զերիս մնացեալ փաշայն փոխանակ իւրոյ խանին զերի վարիւր. եւ զմնացեալ զօրսն սուր ի վերայ եղեալ կոտորեաց եւ ինքն բազում ուրախութեամբ զարձաւ յաթոռ իւր ի քաղաքն Շօշ: Եւ ի գառնալն աստ զիպեալ լինէր, որոյ ընդ սուջ եղեւ տէրս մեր հանդերձ ուխտիք եկեղեցականաց քաղցրաձայն երգօք հնչմամբք ծնծղայից եւ զանկակաց, ընդ որս եւ փափկաձայն եւ երկարաշունչ ուշիմ մանկամբք եւ յետ այսր եկն թագաւորն եւ ուրախութիւն ոչ սակաւ արարեալ հանդերձ զիւանական նախարարօք, սպարապետօք եւ զօրագլխօք իւրովք. եւ իբրեւ զկէս ժամու խօսեալ գտանիւր ընդ տեառնս եւ արարեալ ի քաղաքի աստ իբրեւ զժամ եւ աստուստ չուեալ զնաց ի տեղի իւր:

Եւս եւ ի սոյն ամի աւանտ եւ ի կատար հասուցեալ լինէր զսուրբ եկեղեցին պայծառ զորով (քան) զերկիրնս եւ զեկեղեցկազարդ քան զԱղին եւ նման լուսեղէն երկնից, զի որպէս կա(յ) ի նմայ աստեղս է. լուսատու լինել նոքօք, այսպէս եւ ի սմա լինել կանթեղս է. լուսատու լինել նոքօք, իբրեւ զտիւ լուսատու առնել վասն ոչ լինելոյ խաւար ի սմայ, այլ մտեալսն ի սմա, ի հոտոյ անուշից եւ ի պայծառ տեսութեանց զարհուրեալ եւ թմրեալ լինէն: Ընդ որս համաձայնեալ եւ մեք բնակեալքս... Մաղթեսցուք զի փոխանակ յայսմ յարկի պարգեւեցէ Տէր սրբազան եւ խարազնազգեաց վարդապետիս մերոյ Սաչատրոյ զխորանն անմատոյց... եւ զմեզ ծառայք սոցին (սորին) եւ աշակերտեալ մանկունքս տէր Հայրապետ եւ տէր Յովաննէս համամայրսն եւ տէր (պակաս) եւ ընդ ձեռամբ սմին հնազանդեալ եղբարսն որք կան հաւաքեալ ի սուրբ ուխտս... (մաս մը դատարկ)... տէր յերմեայ կրօնաւոր արեղայն եւ տէր Սարգիս սրբասնունդ եւ պատարագիչ սուրբ ուխտիս եւ տէր Ադամ տակառապետն եւ տէր Սաչատուր ծերունին եւ տէր Մարտիրոս սուրհանդակ հրամանա-

տարն որ եւ Զիկիան կոչիւր վասն հսկա(յ) եւ հանգ տեսեան: Ընդ որս եւ աշակերտեալ մանկունք զՄեսրոպ խոհեմն եւ զԱլեք(սի)անոս դպիրն, զՊողոս եւ զՄովսէս, զՄուշեղ եւ զՊետրոս եղբորորդի տեառնս եւ զՄանկասար ջահնկալսն եւ զԹումայ լուսաբար եւ փակակալ սրբոյ յարկիս: Ընդ սա որ եւ զդասս աշխարհականացն, զոր վարձկան եղեն եւ աշխատեալ յորով ի վերայ մենաստանիս զԲարաղամ եւ զԳրիգոր եւ զՄիքայէլ տնտեսն, զոր այսքան շինութեան հացսն եփեցին, եւ զՇաւրի եւ միւս երկ Գրիգորն եւ զՀայրապետն եւ զՀայկազ մշակն եւ ինձ ամենեցուն տրուպ եւ ախմար գրչի սեւերեսի, ծուլ եւ պղերդի» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 621, Գիրք Հարցմանց Գր. Տաթեւացոյ). հմմտ. մաս մը՝ Ակինեան Հ. Ն., Մովսէս Գ. Տաթեւացի... էջ 215—217):

Չաքարիս վաղարշապատցին հետեւեալ հակիրճ տողերով կը նկարագրէ Սաչատուրի կեանքն ու գործունէութիւնը՝ «... Հինգերորդ Սաչատուր վարդապետն Երնջակեցի, ի գեղջէն Հուզսայ, առաջնորդն Արգուլեաց եւ աթոռակալ սրբոյն Թումայի առաքելոյն: Որ եւ սա նոր նորոգեալ պայծառացոյց զաթոռն զայն շքեղապանձ վայելչութեամբ ի հիւցունս կարգեալ տեսողաց իբրեւ զըրախտ Աստուծոյ զարդարեալ ազգի ազգի ճոխութեամբ՝ հոգեւորօք եւ մարմնաւորօք» (Հ. Ալիշան, Սիսական, էջ 327, հմմտ. Ակինեան Հ. Ն., Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 215):

Հ. Ալիշան այս տողերը յառաջ բերելէ վերջ հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ՝ «Իսոյց ամենայն արձանագիրք եկեղեցոյն նշանակեն յամի 1694—1695 զշինութիւնն, որպիսի է եւ թուական խաչքանդակի, յորոյ վերայ արձանագրեալ է Սաչատուր («Քրիստոսի տխմար ծառա տէր Սաչ(ա)տուր թվ. ՌՃԽԳ. փրկիչ պա[հ]եա ԶՕնոփրիոս), բայց կամ այլ ոք Սաչատուր է գրող քանդակին կամ թուականն յետոյ գրեալ յՈնոփրիոսէ ումեմնէ» (Հ. Ալիշան, Սիսական, էջ 327):

⁵ Առաքել Դաւրիթեցի Ս. Թովմայի նորոգութեան մասին միայն հպանցիկ խօսք կ'ընէ (Պոմ., էջ 353):
⁶ Սաչատուրի բրաձ նորոգութիւնները յիշուած են ուրիշ յիշատակագրութիւններու մէջ ալ. հմմտ. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 326 [հմմտ. Ալիշան, Սիսական, էջ 326], Արարատ, 1911, էջ 853—854): Անոր օրով կ'ըլլան շատ մը Ձեռագիրներու արտագրութիւններ. այսպէս՝ հմմտ. Սմբատեան, Երնջակ, էջ 178. Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 1184 [գարձեալ էջմ. 2056], որ կը յիշուին Սա-

Գուցէ կարելի է՝ խորհել թէ այդ թուակա- նին նորոգութեան առեն երախտադիտորէն յիշել ուղուած է հին նորոգողն ալ (համա- վարը) :

Հատուրի հպատակներն ու աշակերտները, Արարատ, 1915, էջ 388: — 1643ին կը գրուի Կոչունն ընծայու- թեան հետեւեալ յիշատակարանով՝ (Գրեցաւ ընծայու- թեան) ի թուակահանութեան... (Ռ.Ղ.Բ) ի թագաւորու- թեան Պարսից Շահ Ապասին յետ շահ Սեֆուն կայու- ցին յայտ ամի: Ի հայրապետութեան Հայոց... տեան տէր Փիլիպպոս կաթողիկոսի եւ ի զանութեան Մահ- մատ զուլայն, ի սուլտանութեան Նախնջեանու Իմամ- զուլայն որդայն Մասուտին: Ի հոգաւոր զիւղս Շո- սոթ ընդ հովանեաւ սուրբ Յակոբին, սուրբ Աստուա- ճածնին եւ սուրբ Լուսաւորչին: Ձեռամբ ամենամեղ եւ թարմատար զբշի Յովանէս սպասաւորի ի խնդրոյ սրբաւոր տէր Հայրապետ կրօնաւորի, որ է ի սոյն զեղջն որ եւ հրամարեալ ի բազմաց զիւղէս եւ ի տանէ իւրոյ եւ ամենայն ընտանեաց. նա եւս ամենայն կեն- ցազական հոգւոց եւ այժմ կա(յ), ի զիւղաքաղաքն Արուիս ի հոգաւոր մենաստանն եւ կուսարանն սրբոյն Թովմայի առ ոսոս Խաչատուր բարունապետի եւ բանիրունոյ: Յոր եւ երկրորդ նորին զու վար- կեալ է, նկատելով գործառնութիւն քաջապէս առ հո- զեւորս եւ մարմնաւորս: Ընդ սմին եւս երկիրաբար տէր Առաքել վարդապետ եւ տէր Յովհաննէս սննդակից եւ կաթնակից զուլով ի տէր Հայրապետին: Մէկն հո- զեւոր սննդեամբ, երկրորդն ի հոգեւոր եւ ի մարմնա- ւոր, բանի զտէր Առաքել վարդապետն աշակերտակ- ցութեամբ միայն, իսկ տէր Յովանէսն նախ մարմնա- ւոր զուլով. յոր եւ ի մի հօրէ եւ ի մի մօրէ ծնեալ են եւ երկրորդ աշակերտակցութեամբն: Այսպէս սնեալ եւ վարժեալ ետակի եղբարքս այսօրեկ ի մի վարժարա- նում: Եւ թէպէտ եղբայր ասացաք զու տէր Հայրա- պետն սոցին, ապա հայրօրէն զու թ եւ խնամատարու- թիւն ոչ սակաւ ունէր ի վերայ սոցա, թէպէտ արդ ձերութիւն սոցին այլ իմն ներգործէ...: Յոր եւ ան- ցեալ ամն աստուածազան վարդապետն Խաչատուր զնալ կամեցաւ ի սուրբ Երուսաղէմ: Ձուտէր Հայրա- պետն կարգեաց ի տեղապահութիւն իւրում. զտէր Առաքելն եւ զտէր Յովանէսն առեալ ընդ իւր ընդ այլ գործակալօք բազմօք զնոց եւ ի հասանելն ի սուրբ Երուսաղէմ աղմամբ զնուայն եւ տէր Առաքելին վար- դապետական իշխանութիւն, թէ ինչպէս ընկալան զնա Երուսաղէմացիք եւ կամ ինչպէս է ի զնալն եւ ի զան՝ նա ասա ոչ պատկանաւորի առ ի պատմել: Եւ եւս զնոցայի վարդապետն ասեմ զքանչիւն, որ է ասալ- նորդ մերում զիւղս...: Յոր եւ սա այժմ իսկ ներ- կայումս նորոգէ զսուրբ Կարապետն քան զամենայն զերկաղայն զուլով բարձրաբերձիւն եւ հաստակաւոյց հի- մամբն: Արդ ոչ բազում մնացորդք զոն պարսպին եւ կցերուն, զի ի զալ ամին կատարելոց է...: Յորում եւ զեկեղեցին Շոտթու որ կոչի սուրբ Յակոբ նորո- գեալ եղեւ յայտ տարով բազմաշան աշխատութեամբ: Դարձեալ յիշեցէք եւ զՅակոբ վարդապետն Աստա- պատցի, յոր եւ զօրինակն շնորհեաց...» (Ակիւնեան պատմ., չ. Ե., Հաւաք. Յիշատ. էջմ. 779, համա. Կար. Յուց. էջմ. 750): — 1646ին Ստեփանոս՝ «ընդ հովա- նեալ Ս. Բրիտանիոյրի եւ Ս. Թովմայի աղոյն կը գրէ Տօնացոյց մը» (Ակիւնեան չ. Ե., Հաւաք. Յիշատ. չ. Գոտուրեանէն): — 1650ին Խաչատուր Աւետարան մը նորոգել կու տայ (Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Թարգմ. էջ 2, համա. եւ Արարատ, 1911, էջ 224): — 1653ին կը նորոգուի ուրիշ Աւետարան մը (Արա- րատ, 1911, էջ 563): — 1654ին Ս. Թովմայի Աստուա- ճաշունչ մը կը նուիրուի (Արարատ, 1911, էջ 384—386): — «Ի վերջ յիշատակարանի Յայրմաւորքի տպելոյ յԱմստերդամ յամին 1661» Խաչատուր ցանկ մը կը յաւելու (Մմբատեան, Երնջակ, էջ 213): — «Գրե- ցաւ սուրբ ճաշոց ձեռամբ անարժան քարտուղարաց Դուկան երեցոն եւ Արքայամ զարի... ի թիւն ՌժժԱ. ամին... ի իշխանիւր... բարունին Խաչատուր... զի յոյժ փափագմամբ եւ սիրով ստացաւ զսա յիշատակ եւ եղ զսա ի վանս Արուսեաց, որ է ամբոս Գոյթնեաց, որ յա-

Խաչատուրի արդիւնքը Ս. Թովմայի վանքին համար անժխտելի է: Նա զայն բա- րոյապէս ու նիւթապէս կը կանգնէ: Կը հասկնայ սրտերը դրաւել եւ միաբաններու թիւն աճեցնել ու անոնց մտքին ու սրտին մակարդակը բարձրացնել: Կը զիտնայ դրամ ճարել եւ վանքը շէնքերով օժտել: Անոր մահը հարկաւ Ազուլիսի Հայութեան մեծ ցաւ կ'առթէ: Բայց բարեբաստօրէն անոր ան- զարձը կ'ամոքէ իր եղբորորդին Պետրոս վար- զապետը, որ անոր մահէն յետոյ (1664) թե- մին ու վանքին առաջնորդութեան ղեկն ա- ռանձին իր ձեռքին մէջ կ'առնու: Նա արդէն շատոնց — Խաչատուրի կենդանութեանը — արքեպիսկոպոս ձեռնադրուած էր (Մմբա- տեան, Երնջակ, էջ 209, Աղղբ. Հանդ., 1904, ԺԲ., էջ 159):

Պետրոս արքեպիսկոպոսը 1669ին Ազու- լիս կ'առաջնորդէ էջմիածնի աթոռակալը Միքայէլ վարդապետն եւ իրեն օգնական կը նշանակէ Մովսէս վարդապետը (Մմբատեան, Երնջակ, էջ 211, 304—305, համա. Արարատ, 1911, էջ 314):

Պետրոս առաջնորդը Խաչատուրի զծած շուրիղին վրայէն անսայթաք յառաջ կը նկրտի: Փոյթ կը տանի միաբաններու բազմանալուն եւ անոնց բարօրութեան: Նաեւ անուանի կը հանդիսանայ շինութիւններով՝ «1117 ումն Ազուլայց սուրբ Թովմայի առաջնորդ Պետրոս վարդապետն սկիզբն արաւ վանքի չորս կողմի պարիսպն մեծացնել, որ քար ու հո- ղով էր ամեն տներն, սա Քրդատանայ ուս- տէք բերաւ, նոր այլլի հողաքարով պա- րիսպն շինեց, բըշեր շինեց, մաղաղէք շինեց, ոմն կիր ու քարով զոմբէլիքի, մէջն ամեն տա- փիւղ ու զաջով զոմբէլիքի, մէջն ամեն տա-

նուն սուրբ Թովմայի առաքելոյն կառուցեալ է...: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմիաբան սուրբ ուր- տիս զՊետրոս վարդապետն, զՄովսէս վարդապետն, զտէր Մարգիս եւ զտէր Հայրապետն, զտէր Մարկոս եւ զտէր Մանկասարն աշակերտք վերոյդերեւ բարունն եւ զՄիսիստիս եւ զՅարութիւն եւ զԳրիգոր սարկաւազ, զԹովմայ եւ միայնակեացսն, զԳրիգոր սարկաւազ, զԹովմայ եւ զՀայրապետ կրտսարկաւազ, զայլ ամենայն միեղջն եղ- զՀայրապետ կրտսարկաւազ, զայլ ամենայն զԱրարա- րարս ի Քրիստոս յիշեցէք, նաեւ զբազմամեղ զԱրարա- ճամ զբիւս...: Գրեցաւ ի թուարեթութեանս մերում Հայոց Ռժժ մեռասան ամի» (Արարատ, 1915, էջ 76—78, համա. զեռ միաբաններու յիշատակազրուութիւնը, Մմբատեան, Երնջակ, էջ 307): — Տէր Հայրապետ Խաչատուրի օգնականն ու վստահելի անձն էր, համա- վերը: Կը յիշուին միաբաններ՝ Մովսէս վարդապետ, տէր Թովմաս, Մարգիս, Մանկասար, Թովմաս, Յով- հան, Պողոս, Յովսէփ, Յարութիւն սարկաւազ եւ Բար- սեղ, զերձիկ Եղիան, (յ)Իշխանն, Միքայէլ պապն, Մարգարէ դռնապանն եւ կազմարար Գալուստն (Մմբա- տեան, Երնջակ, էջ 204):

չած քարով, թէ խուց, թէ օթախնի, լաւ ար- ցակացոյց, ջրի առուն դցեց պարսպի մէջն, շատ աշխատանք արաւ, շատ դրամ խար- ջեց...» (Մմբատեան, Երնջակ, էջ 210):

Պետրոս եպիսկոպոսը — այր ճարտար եւ բանիրուն (Չաքարիա Սարկաւազ, Պատմա- դրութիւն, էջ 106) — իր սիրելի վանքէն հե- սու, Ս. Կարապետի վանքը կը մեռնի⁸ եւ յաջորդ կ'ունենայ Ռհան վարդապետը (Մմբա- տեան, Երնջակ, էջ 210): Հ. Ալիշան Պետ- րոսի յաջորդը զիտէ Թովմաս Վանանդա- ցին⁹, որուն պաշտօնը ապա կը ստանձնէ Ռհան կամ Յովհաննէս եպիսկոպոսը (Սիսա- կան, էջ 313 եւ 340): Անոր օրով Ս. Թով- մասի միաբան են՝ Մովսէս, Մանկասար, Եսայի, Պողոս, Ստեփանոս, Յովհաննէս, Պողոս, Ստեփանոս, Մատթէոս, Փիլիպպոս, Յովսէփ, Յովհաննէս եւ Ալթուն (Արարատ, 1911, էջ 1011—1012): Հոն կրօնաւորելու կու գայ նաեւ էջմիածնեցի Յակոբ տիրացուն (անդ, էջ 1012):

Յովհաննէս առաջնորդն ալ շինարարա- կան եռուն գործունէութեան յաջող շրջան մը կը բուրդէ: Նա 1694—1696 կը վերաշինէ Ս. Թովմասի եկեղեցին եւ զանգակատները — հաւանականաբար 1679ի երկրաշարժէն չա- փազանց վնասուած (համա. Շահխաթու- նեան, Ստորագրութիւն, Բ., էջ 19—20 եւ 326), դարձեալ պարիսպներու թերակատար մնացած շինութիւնը կ'աւարտէ (համա. վերը՝ արձանագրութիւնները, Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Թարգմ. էջ 115, Աղղբ. Հանդ., 1904, էջ 170. Մմբատեան, Երնջակ, էջ 207): Նորօծեալ եկեղեցւոյն Մեսրոպ իր զրքերէն հատ մը կ'ընծայէ՝ «Յտու... յիշա- տակ հոգւոյ իմոյ ի դուռն սրբոյ առաքելոյն Թովմայի եւ ի ձեռն Տեստն բազմաշխատ եւ քրտնաջան Յովհաննու քաջահանձառ բարու- նեաց պիտի. զոր եւ յայսպիսում վշտաշատ ժամանակի շինեաց զեկեղեցին զանգակա- նովն հանդերձ. որում եւ յամենայն տեղեաց ամենայն ոք ընծայարեք լինէին նորա- շէն եկեղեցեաց...» (Մմբատեան, Երնջակ, էջ 207):

⁸ Իսկ Ս. Թովմայի վանքին մէջ իր ժամանակը կը վախճանի Յովհաննէս Մուղնեցի վարդապետը (Մմբա- տեան, Երնջակ, էջ 210):
⁹ Հ. Ալիշան անոր առաջնորդութեան շատ երկար շրջան մը կը նշանակէ — 1691—1712 — մինչ այդ կարելի չէ ընդունիլ վասն զի ինչպէս պիտի տեսնուի, այդ շրջանին ստեղծ կը յիշուի Յովհաննէս արքեպիս- կոպոսը: — Թովմաս Վանանդացին հայ սուրբութեան պատմութեան մէջ իր տեղն ունի (համա. ի մէջ այլոց Չամչեան, Պատմ. Հայ., Գ., էջ 662—663):

Ընծայարեքներու թւին մէջ ուզած է մտնել նաեւ Նահապէտ կաթողիկոսը, որ 1700ին Յովհաննէսին կը զրկէ Աստուածա- շունչ մը (Ակիւնեան չ. Ե., Հաւաք. Յիշատ. էջմ. 350): Երկու տարի վերջը Թովմաս Ազուլեցին Ս. Թովմայի, որուն արդէն երկու Աւետարան նուիրուած էր, ինքն ալ ուրիշ Աւետարան մը կ'ընծայէ (Արարատ, 1911, էջ 317—318): Դարձեալ երկու տարի յետոյ 1704ին Աղեքսանդր Ա. Չուղայեցի կաթողի- կոսին կտակին մէջ կը յիշուին Ս. Թովմասի միաբաններէն Իսահակ, Աստուածատուր, Յովհաննէս եւ Աղեքսանդր:

Յովհաննէս արքեպիսկոպոսը, որուն օրով 1706ին Յովհաննէս սարկաւազը Բա- ռազիրք մը կը գրէ (Ազգր. Հանդ., 1904, էջ 170) Ձեռագիրներու յիշատակագրութիւն- ներու մէջ շատ դրուատուած է (Ակիւնեան չ. Ե., Հաւաք. Յիշատ. Tübingen, Թ. 20, 1883, Ազգր. Հանդ., 1904, էջ 172): Նա ականջալուր եւ ականատես կ'ըլլայ Ս. Թով- մասի մէջ Դաւիթ բէկի եւ Փարսազանի ա- զատագրական շարժումներուն (Չամչեան, Պատմ. Հայ., Գ., էջ 798, Ալիշան, Սիսական, էջ 331, համա. եւ Բաֆֆի, Դաւիթ բէկ, Վիեննա, էջ 776—777):

Յովհաննէսին օգնական ու յաջորդ կ'ըլ- լայ Բարսեղ¹⁰ որուն մասին եւ շրջանին նկատմամբ հասած են կարեւոր ծանօթու- թիւններ:

Մարգար գրիչ ՌժձԹ (1730) թուին Սեպտ. Լ. Դշ. կ'աւարտէ ընդօրինակութիւնը Վարդանի Մովսէս Հնգեմատեանին Մեկնու- թեան՝ «Ի ծովափակ կղզւոյն Ղրիմու եւ ի ներ մայրաքաղաքիս Կաֆայու եւ ընդ հովա- նեաւ սրբոյն Սարգսի ատենահաս զօրավարի եկեղեցւոյս եւ յառաջնորդութեան քաղաքիս Տեստն Ստեփանոսի արհիեպիսկոպոսին Կա- ֆայեցւոյ. իսկ ի խնդրոյ ումնն Միքայէլի խոհեմազարդ եւ հոգեկիր վարդապետի, որ էր նա յարեւելեան երկրէն, յերեւանու նա- հանգէն ի Նախիջևանու գաւառէն, ի Գող- թան տանէն եւ ի Փառակայ գեղջէն, զուլով նա հարազատ միաբան եւ քրտնաջան սպա- սաւոր ի հոյակապ, բազմահոգի եւ ամենա- զով Գողթնեաց աթոռոյն, ի սրբոյն Թովմայի առաքելոյ վանից, որ ի յԱզուլիս, զոր հիմ- նարկեալ եւ կերտեցեալ է ի սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսէ...: Արդ Միքայէլ վարդա-

¹⁰ Բարսեղ Ս. Թովմայի կը նուիրէ ժամադիրք մը (Մմբատեան, Երնջակ, էջ 239):

պետս այս յայս ամի եկեալ էր յԱնատուրու, յՍտամպուրու, յՈւստումէլու եւ ի Ղըրմու երկրայքս՝ հրամանաւ Գողթնեաց՝ առաջնորդ... Տեառն Բարսղի վարդապետին, սակս նորին վանից գանձանակաց դրամսն հաւաքելոյ, որ նախ քան զայս ութ ամաւ առաջնորդ նոյնոյ վանից միարան եւ աթոռակալ Տնակերացի Յովհաննէս արհիւպատում եպիսկոպոսն եկեալ էր եւ հաստատեալ ի ներ խաներոջ ի մէջ Գողթնեաց վաճառականացն: Եւ ի վերոյ գրեցեալ Միքայէլ վարդապետն եկեալ բազում շրջագայութեամբ ժամանեաց առ մեզ... (գրել կու տայ այս եւ ուրիշ մեկնարանական գրքեր): Այլ արդ յիշես՞իք... զստացող սորին զտէր Միքայէլ վարդապետն... ընդ որս եւ զսրբոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ ձահկեցի զտէր Ղազար հրածորան վարդապետն... Նաեւ մայրաքաղաքիս առաջնորդ զտէր Ստեփաննոս հանձարաչատ վարդապետն... որ զսոցին օրինակն նա շնորհեաց մեզ: Այլ եւ զսրբոյն Թովմայի առաքելոյ վանիցն առաջնորդ զտէր Բարսեղ արհիւպատնաւ ճոխացեալ վարդապետն Ագուլեցի: Ընդ նմին եւ համայն միաբանական դասն, այսինքն՝ զՅովհաննէս արհիւպատն Տնակերացի, զԱղեքսանդր վարդապետն Երջուացի, զՍտեփաննոս վարդապետն Յղնացի, զՅօհան վարդապետն Ղափանցի, զԳրիգոր վարդապետն Ագուլեցի, զԹովմայ վարդապետն եւս Ագուլեցի, զտէր Գրիգորն Ըղնմերեցի, զտէր Յօհանն Յղնացի եւ զմիւս տէր Յօհանն Տնակերացի, զտէր Սարգիսն Անդամիլեցի եւ այլ... հարքն եւ եղբարքն որք ի նոյնում մենաստանին են գետեղեակք...: Եւս ի Տէր հանգուցեալք նոյնոյ վանից միարանքն այսինքն՝ զՍահակ վարդապետն Խգածորեցի, զՓիլիպպոս վարդապետն Ղափանցի, զտէր Աւետիսն Վերիգետցի, զտէր Ստեփաննոսն Տարաշամեցի... նաեւ զբարեպաշտ եւ քրիստոսասէր զպայպատ եւ զփառաւոր իշխանքս այսոքիկ զՓառակեցի Առաքելի որդի պարոն Խաչիկն, զՄարտիրոսի որդի պարոն Առաքելն եւ զԱրովանցի Դանիէլի որդի պարոն Արէլն... որք են իսկապէս սիրելիք եւ հարազատ բարեկամք նոյնոյ Միքայէլ վարդապետին... այլ եւ պատճառք եւ վերակացուք եղեն գրեանցս այսոքիկ գրեցման» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 1050, Մեկնութիւն Հնգեմատենին Վարդանայ. հմմտ. Բարսեղի մասին նաեւ՝ Ագգր. Հանդ., 1904, ԺԲ., էջ 173):

Բարսեղի յաջորդն է Յովհաննէս արքեպիսկոպոս, որ նախորդ Յովհաննէսի աշակերտած է եւ որմէ ունինք յաջորդ յիշատակարանը՝ «Ես յետինս եւ անարժան ի բանասիրաց եւ մոխիր... տէր Յովհաննէս արքեպիսկոպոս ի յարեւելից կուսէ ի Գողթան դաւառէ, անարդիւն յաջորդ ի սուրբ Բարդուղիմաւհին վանից հոյակապ եւ սքանչելագործ սրբոյն Թովմայի առաքելոյ, ուր կայ անշն նորին անդ, միտեալ ի կողն Յիսուսի եւ ներկեալ սարսափելի արեամբն Քրիստոսի յորոյ եղէ ծառայ ստրուկ նուիրեալ ի մանկութենէ իմմէ ի ծնողաց իմոց, սնեալ եւ վարժեալ սրբութեամբ առ ոտս ծերունագարդ գերեմաստ եւ քաջաբորդ արհիւպատն կոպոսին երանելոյն Յովհաննու առաջնորդի նոյնոյ վանաց սուրբ Թովմայի առաքելոյն եւ որոյր թեմի եւ վիճակի նորին տանն Գողթնեաց: Արդ ըզմիւ բնականաւ յոյժ փափաք ունէի յայս գրքոյ, որոյ հեղինակն է Յօհան Դամասկացին... յորոց պատահեցայ ի Բիւզանդ մայրաքաղաքի ի պատրիարքարանն Հայոց եւ ետու գաղափարել զսա ի պտղոյ արդեանց գաւազանի քարոզութեան իմոյ ի թուոյ կենարարին մերոյ ՌՁԽ...¹¹ Ըստ յունարէն ամսոյ յունվարի մուտն... եւ բերեալ եղի ի վանս սուրբ Թովմայի առաքելոյ յիշատակ անշինջ ինձ եւ բարեմիտ ծնողաց իմոց Առաքելոյն եւ Նիկարին եւ այլ ընտանեաց իմոց...: Ծաղկեցաւ եւ կազմեցաւ զիրքս երկուց հարազատից եղբարցն Բարսղի. եւ Յակոբայ» (գրիչն է՝ Արրահամ զպիր, Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ., 101):

Հ. Ալիշան երկու Յովհաննէս առաջնորդներու միջեւ փոխանակ Բարսեղ յիշատակելու կը դնէ 1737ին Թովմաս (Սիւսական, էջ 313): Ընդ է այդ թուականին Արրահամ կաթ. Կրեւացին Թովմաս աւագ երէցը Ագուլիսի մէջ եպիսկոպոս կը ձեռնադրէ սակայն միեւնոյն ժամանակ կը յիշէ թէ Ս. Թովմասի առաջնորդն է Յովհաննէս: Ահա կաթողիկոսին խօսքերը՝ «Ի միւսում օրն եկին Գողթնեաց իշխանքն առաջնորդաւն իւրեանց եւ հրաւիրեցին զմեզ ի յԱգուլիս եւ առեալ զմեզ փառօք զնացին յԱգուլիս եւ մնացի անդ մինչ ի սուրբ պատեքն եւ ի նոր կիրակի, զի յանուն սուրբ Թովմայի

¹¹ 1740ին Ագուլիսի վանքին մէջ անոր միարաններէն Մեսրոպ վարդապետ կը գրէ Յովհաննու Յայտնութեան Մեկնութիւնը (Մաքատեան, Երնջակ, էջ 140): Իսկ 1732ին Պարոն Թովմաս սոյն վանքին Աւետարան մը կը նուիրէ (անդ, էջ 310 եւ Արարատ, 1911, էջ 317):

Առաքելոյն է վանքն հիանալի եւ զարմանալի տեսողաց եւ զի որդեակն իմ առաջնորդն նոցա Յովհաննէս պարկեշտարարոյ՝ հեղահողի եւ հանձարեղ վարդապետն՝ վաղածանօթ գոյով ինձ ի սէր նորա եւ վասն ուխտի վանացն, զոր լինի ի նոր կիրակիէի եւ վասն ժողովրդեան աղաչանաց մնացի անդ այսքան օր...: Որպէս եւ ի նոյն օրն Կարմիր կիրակի մատուցեալ իմ զսուրբ պատարագն ձեռնադրեցի եպիսկոպոս զԱւագ երէցն Ագուլեաց զտէր Թովմայն միարան սուրբ էջմիածնայ» (Պատմագրութիւնք, էջ 77): Ինչպէս այս խօսքերէն պայծառ կ'երեւայ Յովհաննէսի (այսպէս ըսենք Յովհաննէս Բ.) կենդանութեան Թովմայ եպիսկոպոս կը ձեռնադրուի: Անկարելի է ենթադրել որ այստեղ յիշուած Յովհաննէս եպիսկոպոսը Պետրոսի կամ Թովմաս Վանանդացիի յաջորդն եղած ըլլայ, վասն զի ժամանակը չի յարմարի (նա արդէն 1682ին առեւնները առաջնորդ կը յիշուի [հմմտ. վերը եւ Մաքատեան, Երնջակ, էջ 210] եւ երկրորդ նախորդ յիշատակարանը կը հակառակի: Հետեւաբար կը մնայ ըսել կամ Արրահամ. Կրեւացի կաթողիկոսին յիշած Թովմաս եպիսկոպոսը Յովհաննէս Գ. եպիսկոպոսի յաջորդն է (եւ ոչ թէ Յովհաննէս Բ. անոր) եւ կամ նոյն իսկ խորհել որ նա Ս. Թովմասի առաջնորդ չէ եղած, այլ Արրահամ Կրեւացին էջմիածնի սոյն միարանն իր արդիւնքներուն գնահատութեան եւ ուրիշ նպատակի համար եպիսկոպոս ձեռնադրած ըլլայ: Սակայն ամէն պարագայի կը մնայ իրողութիւն որ ԺԲ. դարու վերջին կիսուն Ագուլիսի վանքին ու թեմին առաջնորդն է Թովմաս անուն անձ մը կամ համանուն երկու եպիսկոպոսներ¹², եթէ խորհինք որ Յովհաննէսի (Գ.) օգնականն ու յաջորդն եղած ըլլայ Կրեւացիին ձեռնադրած Թովմաս աւագերէցը, վասն զի զժուար է խորհել որ անոր (1737ին եպիսկոպոս ձեռնադրուածի) կեանքը երկարած ըլլայ մինչեւ 1793—1796էն ալ առդին (հմմտ. Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Թաւրիղի, էջ 44 եւ Արարատ, 1911, էջ 121):

Սակայն դեռ խօսք մը Յովհաննէսի նկատմամբ: Ա. Կրեւացի կաթողիկոսին յաջորդին՝ Ղազար Ա. Ձահկեցի կաթողիկոսին տեղապահ գիտէ Հ. Չամչեան Յովհաննէս

¹² 1763ին Թովմաս առաջնորդ Սիմէոն կաթ. էն կը ստանայ «գլխաւ առաջնորդական» (Դիւան, Գ., էջ 94):

Ագուլեցի՝ «ամիսս իբրեւ հինգ» (Պատմ. Հյց., Գ., էջ 822, հմմտ. եւ Ալիշան, Սիւսական, էջ 331), մինչդեռ Յիշատակարանի մը մէջ կայ՝ «Միքայէլ Ագուլեաց վանիցն, որ այժմ ՌՁՂ տեղապահ է սրբազան վեհին Ղազարու» (Մաքատեան, Երնջակ, էջ 152, հմմտ. Միքայէլի մասին՝ վերը):

Դառնանք այժմ Թովմաս առաջնորդին: Յիշատակարանի մը մէջ կայ՝ «Եւ զսոյն զայս արարի հրամանաւ գերապատիւ հօր մերոյ եւ առաքելաշաւիղ առաջնորդին Գողթան գաւազանի Դաստակեցոյ, որ է վեցերորդ եպիսկոպոս¹³ ի շինութենէ այսմ առաքելական աթոռոյս, այր խորհրդական եւ հանձարեղ, խոնարհամիտ եւ հեղահամբոյր, քաղցրաբարոյ եւ բազմապարզեւ՝ զարդարեալ ձրիւք հոգւոյ եւ մարմնոյ եւ փառաւորեալ յամենեցունց, որ կայ այժմ եւ կառավարէ զսուրբ Աթոռս խոհական խորհրդով, թէպէտ եւ կրէ զպէսպէս վիշտս եւ նեղութիւնս ի գառնութենէ եւ յաղքատութենէ ժամանակիս...» (Մաքատեան, Երնջակ, էջ 293, Արարատ, 1911, էջ 126, Ագգր. Հանդ., 1901, էջ 160):

Սիմէոն կաթ. Երեւանցին 1765ին կը գրէ Ս. Թովմայի վանքին՝ «մեղադրութիւն վասն ոչ խնդրելոյ նուիրակ» (Դիւան, Գ., էջ 321), իսկ 1772ին «թուղթ մի եւս առ Թովմայ առաքելոյ վանից Թովմայ վարդապետն վասն ընդունելոյ զնուիրակն» (Մաքատեան, Երնջակ, էջ 457): Նոյն թուականին Սիմէոն կաթողիկոսը կը գրէ՝ «առ Թովմայ առաքելոյ վանից միարան Պետրոս վարդապետն վասն առաքեալ մալաչի տանձին» (անդ, էջ 457). եւ կոնդակ մը կու տայ՝ «առ ժողովարար Մատթէոս վարդապետն, ընդ որում առաքէ առ ժողովուրդն Ագուլեաց զԱն Գրիստափորի վիպին» (անդ, էջ 457): Երկու տարի յետոյ Սիմէոն կաթողիկոսը Թովմաս առաջնորդը կը յորդորէ Մատթէոս վարդապետը էջմիածին եպիսկոպոս ձեռնադրելու բերել (անդ, էջ 458): Անոր յաջորդը կաթողիկոսական զահին վրայ՝ Ղուկաս Կարնեցին 1780ին իր ընտրութիւնը կը ծանուցանէ Թովմասին եւ Ստեփանոս միարանին արտօնութիւն կու տայ Պոլիս երթալով հայրենակից վաճառականներու սրտերը բախել՝ նուէրներ առնելու եւ բերելու համար (անդ, էջ 479): Նմանա-

¹³ Թովմաս վեցերորդ եպիսկոպոսն է վերաշինութենէ յետոյ — ի շինութենէ — սակայն հարց է թէ իսպառուրբ՝ թէ Յովհաննէսի շինութենէն վերջը:

պէս նոյն կաթողիկոսը 1782ին թղթով մը՝ «յորդորէ տալ վանից սուրբ Թօմայ առաքելայն զամենատեսակ հասս, նուէրս, տուրս եւ արդիւնս» (անդ, էջ 460, հմմտ. անդ, էջ 461, թուղթ մը առ Թովմաս առաջնորդ):

Թովմայ առաջնորդը դժբախտութիւնը կ'ունենայ տեսնելու իր սիրելի վանքին թաւանումը¹⁴ «Ի թվին ՌՄԼԸ (1789) Մուստաֆայ խանն եկաւ յԱզուլիս եւ Թօմայ Առաքելայ վանքն թաւանեց, եկեղեցուն անօթքն դերի անկան. թէ անօթեղէն, թէ արծաթեղէն, թէ գիրք» (անդ, էջ 205): Այս կողմապետի մասին կայ հետեւեալ կարեւոր յիշատակարանը՝

«Յամի ներմարմնութեան Տեառն 1789 եւ ի թուականութեան Հայոց ՌՄԼԸ մեծահոգակ եւ գերահարգ վանքն սրբազնասուրբ Առաքելայն Թօմայի, որ է կառուցեալ ի յերկրին Նախիջեանու, յայտ ամի ասպատակեցաւ ի չար եւ անօրէն տաճկացն զօրաց եւ զամենայն զինչս սրբոյ վանիցն աւար առեալ եւ տարեալ ի յերկրին Երեւանու, վաճառեալ էին անդ զամենայն եկեղեցական զսպաս եւ կամ զայլ ինչս սրբոյ վանիցն: Իսկ սոցա լուեալ զայս համբաւ բոթալի կարի յոյժ ցաւեցեալ էին, վասն զի է տուն հոգոց պայծառ իշխանագուն իշխան նախնեացն իւրեանց, որք իշխեալ էին երկրիս յայսմիկ, իշխանք գոլով ժամանակաւ եւ կացեալք եւ ընդ հովանեաւ սրբոյ վանիցս, վասն որոյ մեծաւ փափագմամբ որոնեալք էին յուզելով թէ՛ պուցէ պտանիցեն եւ զսպաս սրբոյ հրաշակերտի վանիցս, եւ առեալ զայն վերադարձուցեն ի սուրբ վանս, բայց ոչ են գտեալ զինչ ի սպասու սրբոյ վանիցս, բաց ի յայս յայտմաուր գրքէս... որ գնեալ վերստին նորոգեցուցեալ ետուն յիշատակ սրբոյ վանիցս Թօմայի...» (Արարատ, 1911, էջ 1006 եւ Ազգր. Հանդ., 1904, ժ.Բ., էջ 167):

Այս ծանր օրերու բեռան տակ Սիմէոն աննկուն է եւ բարեբաստօրէն առատատուր ձեռքեր օգնութեան կը փութան (հմմտ. վերը եւ Դիւան, Գ., էջ 522, 588):

Անոր վանահայրութիւնն եւ առաջնորդութիւնը երկարատեւ կ'ըլլայ¹⁵: Բայց Դա-

¹⁴ Ազատ խանը 1751ին Ս. Թովմասի վանքը կ'առերէ (Մարտեան, Երնջակ, էջ 457, հմմտ. եւ Հայաստանի Կոչնակ, 1938, էջ 58):
¹⁵ Սիմէոն քանի մը անգամ էջմիածին զայցած է (Դիւան, Գ., էջ 94 եւ Գ., էջ 523): Սիմէոն կաթողիկոսն անոր օրով Մատթէոս վարդապետը էջմիածին կը կանչէ եւ «վանս վանիցն» կոնդակ մը կու տայ (Դիւան,

նիէլ կաթողիկոսի ընտրութեան ու օծման կը մասնակցի Դասպար վարդապետ Թովմայի առաքելայ (Դիւան, Ա.—Բ., էջ 151, Ե., էջ 235 եւ 379):

ՌՄԾԹ թուականին Ս. Թադէոսի վանքի միարանը՝ Կարապետ կ'ըլլայ՝ «միարան սուրբ Թօմայի առաքելայ վանիցն», որ Եսայի առաջնորդի հրամանովը Նուխի կ'երթայ «ժողովի» (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 121):

1812ին Գողթնի վէրելդարն էր Ջուղայեցի Պօղոս Վ. Դալլաքեան (Արարատ, 1911, էջ 1012):

1831ին Ս. Թովմայի արդէն առաջնորդ էր Սիմէոն եպիսկոպոս, որ Յովհաննէս Կարբեցիին կաթողիկոսական ընտրութեան ժողովքին անդամ էր (Դիւան, Ա., էջ 267 եւ Ժ., էջ 485): Նա կ'ըլլայ «վերջին եպիսկոպոս, զի յամի 1837 բարձաւ աթոռ եպիսկոպոսութեան եւ կարգեցան լոկ առաջնորդք, որոց յետինք են՝ 1870 Յակոբ վարդապետ, 1871 Կարապետ վարդապետ, 1881 Անանիա Վ. Համազասպեանց, 1883 Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան¹⁶» (Ալիշան, Սիսական, էջ 313): Այս անուանացանկին վրայ պէտք է յաւելուլ՝ Գէորգ Վ. Սուրէնեան, 1878ին (Արարատ, 1878, էջ 399), Գրիգոր Տէր Ստեփանեան, 1898ին, Մեսրոպ Վ. Մաքսուտեան, 1906ին, որ վանքին մէջ կը գտնէ 58 ձեռագիր, մինչ իր նախորդին՝ Գրիգորի օրով անոնց թիւն էր 89—90¹⁷ (Արարատ, 1911, էջ 117—118):

Ս. Թովմաս առաքելայի վանքը Գողթն գաւառի սիրելի եւ երեւելի վանքն է, մանաւանդ Ազուլիսի ժողովուրդն անով հպարտ է եւ իր միջոցներովը — որոնք երբեմն, ինչպէս յայտնի է, այնքան շատ էին — ջանացեր է զայն կանգուն պահել եւ այլ եւ այլ նուէրներով ձոխացնել: Անոր վանահայրներու կամ Գողթնի առաջնորդներու մեծ մասն եղած է ուսեալ եւ կորովի տէր, սակայն աչ-

Գ., էջ 468 եւ 482): Նոյն կաթողիկոսը Թովմասին թուղթ մը կը գրէ՝ «Յազազս Գեանճեցի Յօհաննէսին» (Դիւան, Գ., էջ 93):

¹⁶ Աղափիրեան ծնած է՝ 1826ին, եպիսկոպոս եղած՝ 1872ին եւ մեռած՝ 1898ին (հմմտ. Արեւելք, 1887, Թ. 958, Արարատ, 1896, էջ 189 եւ 1898, էջ 206):

¹⁷ Ս. Թովմայի ձեռագիրներու ցուցադրութիւնն եղած է «Արարատ»ի (1911—1915) եւ «Ազգր. Հանդէս»ի (1904, ժ.Բ.) մէջ: Սոյն վանքին ձեռագիրներուն եւ ուրիշ զբաղիւրներու յիշատակագրութիւններու մէջ սակայ Ս. Թովմասի վանքն ու անոր միարանները կը յիշուին: Աւելորդ համարուեցաւ — ծանրութենէ խուսափելու համար — ամէն բան յառաջ բերելը:

քառու մատենագիր մը վանքէն չէ ելած: Առաջնորդները սակայ շինութիւններով եւ վերանորոգութիւններով զբաղած են եւ այդ նպատակի համար աջակցութիւն գտած: Գողթնի եւ հարեւան վայրերու հայ ժողովուրդը Ս. Թովմասի վանքը նկատած է ուխտի վայր եւ մասունքներով օժտուած սրբատեղի մը եւ խոնկրամ դիմած է հոն (հմմտ. Ճոաքաղ, 1860, էջ 163 եւ 1862, էջ 85—86, Արր. Կրետացի, Պատմագրութիւն, էջ 77 եւն):

Ազուլիսի վանքը¹⁸ վերջին ժամանակներս կրնար իրեն սեպհականութիւն անուանել դեռ 60 դեպիադին հող (Ազգր. Հանդ., 1904, էջ 311 եւ Նոր-Դար, 1891, Թ. 177): Մարտեան անոր ինչքերը կը թուէ՝ 1. Այգի հինգ յԱզուլիս¹⁹ եւ յայլուր, որք բերեն ի տարին 325 բուրլի, 2. Պարտէզ ծառոց 8 հատ յԱզուլիս եւ այլուր..., 3. Կրպակք 18 յԱզուլիս..., 4. Տմնք երկու..., 5. Զրագաց մի..., 6. Վարելահող 10 խալվարաչափ...» (Երնջակ, էջ 489):

6. Ս. ԽԱՉԻ ԿԱՄ ԱՆՋԻՆԵԱՐԵՐ ՎԱՆՔ

Վանանդաձորի վանքն է Ս. Խաչի վանքը: Եկեղեցին, որ ունի երկու խորան եւ աւազան մը, անգամէթ է եւ սրբատաշ քարերով շինուած: Անսին եւ թաղակապ: Պատահանները նեղ ու կարճ: Երկար՝ 20 արշին, լայն՝ 15 արշին եւ բարձր՝ 12 արշին: Պարսպապատ: Անոր շուրջը կը գտնուին քանի մը հին եւ երկու նոր սենեակներ (Ազգր. Հանդ., 1904, էջ 314—315):

Մարտեան Ս. Խաչի հիմնարկութիւնը կը դնէ 1457ին եւ հիմնադրերը գիտէ Պետրոս եպիսկոպոսը (Երնջակ, էջ 491): Խաչքարի մը վրայ կը կարդացուի «Թվ. ՌձԼԶ. Յիսուս Քրիստոս» (Ազգր. Հանդ., 1904, էջ 315):

Ս. Խաչի զարդն ու փառքն է Թովմաս Վանանդեցին, որ անոր մասին կը գրէ՝ «Ապա ի վանքն Խաչին ելին, որ կառուցեալ յանքոյթ վայրին՝ ի գաղաթան Տրունեաց ձորին» (Ալիշան, Սիսական, էջ 338):

¹⁸ 1850ին սկսած է հոն վանական դպրոց մը եւ վերաբացուած 1869ին (Երնջակ, էջ 489):

¹⁹ Այդինքէն մէկուն մէջը կը ցուցուի Փարսագան մեղիքի գերեզմանը, իսկ վանքին մերձերը կայ մատուռ մը, ուր աւանդութեան համեմատ կը գտնուին Կու(ւ)մսի նշխարները (Ազգր. Հանդ., 1904, էջ 311 եւ Ալիշան, Սիսական, էջ 329):

Թովմաս Վանանդեցին հանրածանօթ է իրրեւ տպագրիչ եւ իր մասին կը վկայէ թէ է՝ «Եպիսկոպոս սուրբ Խաչի վանիցն Գողթան, որ կառուցեալ կայ ի կատար վայելուչ ձորոյն Վանանդու» (Ալիշան, Սիսական, էջ 338—341, Ճոաքաղ, 1860, էջ 121 եւ 135, Մարտեան, Երնջակ, էջ 391, հմմտ. եւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 142):

Խաչավանք:

Մարտեան կը գրէ՝ «Սուրբ Խաչավանք մերձ ի Քաղաքի գիւղն, շինեալ յամի Տեառն 1687 եւ նորոգեալ յԱզուլեցի յիշխանաց 1859 Վանքն ըստ ամենայնի յամրողութեան կայ, նոյնպէս քանի մի սենեակք եւ պարխալն» (Երնջակ, էջ 489): Եկեղեցին հին է եւ փոքր, թաղակապ ու անսին: Դրան վերեւ խաչքարի մը վրայ կը կարդացուի՝ «Սուրբ Խաչս յիշատակ աղա Շախայ, թվ. ՊՂ» (Ալիշան, Սիսական, էջ 341 եւ Ազգր. Հանդ., 1904, էջ 315):

7. ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՆՔ

Մեսրոպայ վանքը կամ անապատը, — նմանապէս կոչուած Մարեւան, Մարվանիս, Մեսրոբավան կամ Ամասրոյ վանք — կը գտնուի Որդուատ վիճակի մէջ, Երասխի մօտերը: Լալայեան կը գրէ՝ «Ալլահից դէպի արեւելք հազիւ 5 վերստ հեռու գտնուած է Մեսրոբավան կամ Մարվանիս, եւ կամ ուսեւէն Նասիրվազ կամ Նասիր-արագ կոչուած գիւղը: Պատմական դարերու աւանդութիւնն ասում է թէ՛ այս գիւղն է այն վանքի սրբավայրն, ուր սուրբ Մեսրոբը հալածելով նախնի կառապաշտութեան մնացորդները, հիմնել է այն փոքրիկ եկեղեցին որ... հիմնադրի Մեսրոբի անուանով այժմ էլ կոչուում է Մեսրոբավան կամ Մարվանիս» (Ազգր. Հանդ., 1904, էջ 323—324): Իսկ գիւղին արեւմտեան կողմը — Ալանգեազ վտակի աջ ափին — փոքրիկ հարթութեան մը վրայ բարձրացած է այն փոքրիկ վանքը, ուր մեծ թարգմանիչն աղօթած է: Եկեղեցին հասարակ քարերով կառուցուած չէնք մըն է: Զորս սիւներու եւ ութը կիսասիւններու վրայ կը բոլորին արարական կամարներ կրելով ութ պատուհանով օժտուած մեծ գմբէթ մը, որուն կից ուրիշ փոքրիկ գմբէթ մը եւս կայ: Ունի մկրտութեան աւազան մը եւ ասոր քովն ու հանդէպ ուրիշ համանման բացուածքներ:

Խորաններն երկու հատ են, իսկ պատուհանները՝ իւրաքանչիւր պատի վրայ երեքական — շատ նեղ ու ցած: Միակ արեւմտեան դուռը կը բացուի դէպի չորս սիւնի վրայ հաստատուած թաղակապ գաւիթը: Եկեղեցւոյն երկարութիւնն է՝ 6 սաժէն, լայնութիւնը՝ 3 սաժէն եւ 2 արշին, իսկ բարձրութիւնը 5 սաժէնէն քիչ մը աւելի: Սեղանին ձախ կողմը՝ խաչարձանի մը վրայ արձանագրուած է՝ «Թաղոսի եւ մաւրս Գոհարին եւ հաւր Ալիդ բէկին, Ամիրջանին, Սիրունակին, թվ. 20»:

Սեղանին ձախակողմը խաչի մը տակը գրուած է՝ «Սաչս յիշատակ Մարտիրոսի Գիւլտանին թվ. ՌԿԷ», իսկ անոր աջ կողմը խաչարձանի մը տակը՝ «Սաչս յիշատակ է Պօղոսին թվ. ՌԿ»: Գաւիթին ձախակողմը կը կարգացուի այս արձանագրութիւնը՝ «Արդ յիշեցէք վանքիս միաբանքն աներախտ աւուր վանացս տէր Ղազար քահանայն՝ իւր աշակերտ տէր Գրիգոր եւ գեղիս օրհնեալ քահանայն տէր Աղարիան», իսկ նոյնին աջակողմը՝ «...Սր. Աստուածածին քեզ լինի հովանի, պահպան... դպիր սուտանուն Դաւիթ որդի տէր Գրիգոր, սուրբ Աստուածածին, գրուեցաւ թվին ՌՃԾԷ» (Ազգր. Հանդ. 1904, էջ 325—326, Փափազեան, Հնութիւնք հայրենեաց, Գ., Թ. 296):

Աւանդութեան համաձայն հոս ուղած է Ս. Մեսրոպի մարմնոյն ամփոփումն ընել Շարիթ իշխանը, որ գայն շինել տուած է, սակայն Վահան Ամատունին Օշականի մէջ թաղել կու տայ մեծ Հացեկացին (Սորենացի, Պամ. Հյց. (քնն. հրտ.), էջ 357, Ալիշան, Սիսական, էջ 312, 319 եւ 315, Տաշեան, Մայր ցուցակ, էջ 76, Սմբատեան, Երնջակ, էջ 491):

Արձանագրութիւններէն դատելով հին վանք մը չէ: Տեսած է նորոգութիւն: Եղած է այցելուած ուխտատեղի (Ազգր. Հանդ., 1904, էջ 326):

8. Ս. ՆՇԱՆԻ (ԲՈՒՍՏԻ) ԱՆԱՊԱՏԸ

Գողթնի Բիստ կամ աւելի սովորական Բուստ կամ Պուստ գիւղի եկեղեցին՝ Ս. Ստեփանոս կ'երևայ թէ վանք եղած ըլլայ (Փափազեան, Հնութիւնք հայրենեաց, Գ., Թ. 296. Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Նոր Բայազետի, էջ 22), բայց աննշան: Սոյն գիւղի անուանի վանքը կամ անապատն է Ս. Նշան, որ անկէ երկու ժամ հեռու կառու-

յուած է: Փոքրիկ է եւ պարսպապատ (Ազգր. Հանդ., 1904, էջ 328 եւ Փափազեան, Հնութիւնք հայրենեաց, Գ., Թ. 296): Միաբաններու սենեակները քայքայուած են:

Աւանդութեան համաձայն Ս. Նշան արդէն Ս. Մեսրոպի դարուն հիմնուած է եւ ապա վերանորոգուած 1668 թուականին Պետրոս եպիսկոպոսի հսկողութեան ներքեւ (Սմբատեան, Երնջակ, էջ 490—491): Անկէ յառաջ ընտրուած է ծաղկուն շրջան մը՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Կողմանեղ եւ անարհեստ գրչի Գրիգոր արեղայի ի դաւառիս Գողթան ի յանապատիս Բուստոյ ընդ հովանեաւ ամենագոր սուրբ Նշանիս, սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Սարգսիս: Արդ պատճառ իջին աստուածադաւր աստուածաշունչ քառադետ սուրբ աւետարանիս բարի կրանաւորքս Տէր Մեսրոպի, Տէր Մովսէս: Եւ ետուն գրել զսուրբ աւետարանս ի Թ. ՁԼԸ իշխանութեամբ Գողթան վիճակիս տէր Ազարիայ եպիսկոպոսի²⁰: Արդ աղաչեմ դամենսեան յիշեցէք ի Տէր Աստուած զփառաւոր կրանաւորքս զՄեսրոպ, զՄովսէս, զԴաւիթ նահապետ, զՅակոբ, Սարգիս միայնակեաց: ... (Յիշեսցէք) Եւ զիս զանարժան գրիչս Գրիգոր, զհայրն իմ Պետրոս քահանայ, զմայր իմ Միհրիշատ: Գրեց(աւ) աւետարանս հայրապետութեամբ Սարգիս կաթողիկոսի, խանութեամբ Յաղուփ բէկի: Զի առաջնորդութեամբ... սուրբ Նշանիս տէր Մոսրովը արեղայիս եւ Մովսէսի, ստացողի բարի կնոջս Ղարիպ խաթունի ոսկեթել ծիրանածամ ազատ խաթունի: Եւ ետուն սուրբ աւետարանս վախճ եւ ընծայ սուրբ Նշանիս, սուրբ Աստուածածնիս Բստոյ վանուցս» (Երնջակ, էջ 274—276):

Հաւանորէն Բստի Ս. Նշանի մէջ ապրած ըլլան նաեւ Յակոբ (աշակերտ Գր. Տաթեւացւոյ) եւ Ղուկաս Բստեցի (հմմտ. Ալիշան, Սիսական, էջ 344 եւ Աղանունի, Միաբանք եւ այցելուք Երուսաղէմի, էջ 238 եւ Էփրէկեան, Բնաշ. Բառարան, էջ 432): Հոս կու գայ 1670ին Չաքարիա Ազուլեցին, որ կը գրէ՝ «Այս այն սուրբ Նշանն է, որ Բրիտանոս աշակերտաց ոտն լուաց, այս խաչս այն քաշաի պղինձն է, սորայ առաջնորդն էր

²⁰ Անթուակիան յիշատակարանի մը մէջ կայ՝ «Մանաւանդ զստացող կուսակրօն արեղայիցս՝ զտէր Ազարիէն, որ ի գեղջէն Բստու ի բնակութիւն հաշակաւոր վանիցն որ սուրբ Նշան անուանի, նաեւ տէր Յակոբն եւ տէր Յոսանն ի գեղջէն Դեւու, բնակութիւն սոցա սուրբ Ստեփանոս վանիցն» (Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Թաւրիգի, էջ 125):

Բստուցի Ալեքսան վարդապետն²¹ (Ազգր. Հանդ., 1904, էջ 328. Սմբատեան, Երնջակ, էջ 211): Այստեղ կ'այցելէ նաեւ Աբրահամ Կրետացին՝ «Ելայ ի վանքն աղանանման աղինասարաս ի վայելուչ բարձրանիստ տեղի, լի պարտիզօք, ջրարբի եւ բարեբեր հողով եւ պարզ առողջարար օդով. զուարճացաւ սիրտ իմ մոռանալով զաշխատութիւնս ձանապարհին, այլ եւ առաջնորդ նոցա Պետրոս վարդապետն այր խոհեմ եւ բարեբարոյ եւ միաբանք սիրով եւ հնազանդ» (Պատմագրութիւն, էջ 78, հմմտ. Էփրէկեան, Բնաշխ. Բառարան, էջ 432):

Գուցէ այս անապատին²² հետ նոյն ըլլայ կապաւառի անապատը, ուր Թովմաս Արժիշեցին կը գրէր աւետարան մը 1336ին՝ «Ի յերկրիս Գողթան ի յանապատիս, որոյ անուն Կոպատաի կոչի, որ է յանդիման գեղին Բստոյ» (Ազգր. Հանդ., 1904, ԺԲ., էջ 158 եւ Արարատ, 1911, էջ 386, ուր գրուած է «Կոպատոս»²³):

9. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔԸ

Սմբատեան կը գրէ՝ «Վանք Ռամիս գեղջ յանուն սրբոյն Սարգսի զօրավարին» (Երնջակ, էջ 490): Լալայեանց Ռամիսի մէջ եկեղեցի մը գիտէ եւ վանքի մասին ակնարկութիւն չընէր (Ազգր. Հանդ., 1904, ԺԱ., էջ 318):

10. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ (ՄԵՏ ԳՈՒՆՈՅ ԿԱՄ ՄԻԻՋԿԻՒՆՈՅ ԿԱՄ ՄՅԳՈՒՆԻ) ՎԱՆՔԸ

«Յիւնայից մօտ²⁴ հինգ վերստ հեռու դէպի հարաւ մի հարթութեան վրայ գտնուած է Ս. Ստեփաննոսի ուխտատեղին, որ մօտակայ աւերակ գիւղատեղու անունով Միւղկունց վանք էլ կոչուած է: Սա Թովմաս եպիսկոպոսի յիշատակած Մցղունի Ս. Ստեփաննոսի վանքն է» (Ազգր. Հանդ., 1904, ԺԱ., էջ 322): Սմբատեան կ'անուանէ զայն Մեծ Գունոյ վանք (Երնջակ, էջ 491): Տեսած է նորոգութիւն, պարիսպները՝ կիսակործան:

²¹ Ալեքսան առաջնորդը կը յիշուի ՌՃԼԶին գրուած արձանագրութեան մը մէջ հմմտ. Ազգր. Հանդ., 1904, էջ 327:

²² Հոգեբու մասին տեսնել՝ Փառակայ վանքերը: ²³ 1385ին ժամագիրք մը կը գրուի՝ «Ի յերկրս Գողթան ի յանապատս Սիճիակիս ի դրան սուրբ Յովանիսիս առ ոտս մեծ բարունապետին Յովանիսի...» (Սմբատեան, Երնջակ, էջ 177): Կարծեմ Ս. Նշանի անապատն է ակնարկուածը:

²⁴ Յիւնայի Ս. Աստուածածին եկեղեցին հմմտ. Փափազեան, Հնութիւնք հայրենեաց, Գ., Թ. 304:

Անծանօթ է շինութեան տարին: Աբրահամ Կրետացին այս վանքն ալ կ'այցելէ (Պատմագրութիւն, էջ 77): Իրմէ յառաջ հոն կը ժամանեն ուխտաւորներ՝ «Եկեալ հասին ի Գողթն գաւառն ցանկալի յեկեղեցին Ստեփաննոսի, որ մականունն Մցղուն կոչի» (Ճոթագր, 1860, էջ 136. Ալիշան, Սիսական, էջ 343):

11. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ (ՆԱՒՈՒՇԱՅ) ՎԱՆՔԸ

Տեւի գիւղի շրջակայքը, Նաւուշ գիւղի մօտ: Եկեղեցին շինուած է սրբատաշ սեւ քարերով եւ թաղակապ է: Կամարակապ դրան վրայ կայ այս արձանագրութիւնը՝ «Թվ. ՌՃԻՉ Շնորհօք սրբոյն Երրորդութեան ձեռնարկեցաք նորոգութեան սուրբ տաճարիս այս տրուեան սրբոյն Ստեփաննոսի աւուան, եղև օծուեմ օրհնութեան ձեռամբն Պետր(ո)սի դետի Գողթան եւ Հայոց հայրապետութեան տեսուն Յակոբայ վեհ Երանեան արգեամբք եւ տրօք ողորմութեան Տեւոյ օրհնեալ ժողովրդեան եւ յօթար կամօք խօստացան տալ վանիցս Շէն հակն այն իրաւանաց քահանայական ԻԳ բաժնէն զԱ. հիսայն եւ որք տալ ոչ կամենան նզովեալք են մինչ յաւիտեան յաւուրս Յոհաննու բարունեան՝ աստ միաբան հաստատեցան եւ որք յուսով աշխատեցան վարձս ընկալցին յարութեան ամէն» (Ազգր. Հանդ., 1904, էջ 329): Սեղանի աջ կողմը կայ գաղտնի սանդուղ մը, որ կը տանի խորանին վերի մասը: Հոն կամարակապ խաչքարի մը վրայ կայ այս արձանագրութիւնը՝ «Սաչս յիշատակ է տէր Սարգսին թվ. ՌԻԷ» (Անդ, էջ 329):

«(Ս. Ստեփաննոսի) վանքն կայ միայն կանդուն, իսկ սենեակը եւ պարիսպն ի սպառ խոնարհեալք յերկիր» (Սմբատեան, Երնջակ, էջ 490):

Լալայեանց այս վանքը կը միտի Տեւի կուսանաց անապատի հետ նոյնացնել (Ազգր. Հանդ., 1904, էջ 330, հմմտ. եւ աստ էջ 59):

Ս. Ստեփանոս յիշատակագրութեան մը մէջ յիշուած է իբրեւ անապատ, ուր Աւետարանի մը առաջին նորոգումը տեղի կ'ունենայ (Երնջակ, էջ 276, հմմտ. Բուստի Ս. Նշան, ուր կը յիշուին Ս. Ստեփանոս բնակողներ, հմմտ. վերը, էջ 56, ծն. 20):

12. ՏԵԻԻ ՎԱՆԻՆ ՈՒ ԿՈՒՍՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏԸ

Արքայազամ Կրետացին իր այցելութեան ատեն Տեւի կամ Դիվա գիւղի մէջ կը տեսնէ վանք մը, որ աւերակ էր եւ կուսանաց անապատ մը²⁵, ուր «է. միայն ապաշխարող» կը գտնէ (Պատմագրութիւն, էջ 78. Ալիշան, Սիսական, էջ 330): Ինչպէս վանքին նաեւ կուսաստանի անուններն Արքայազամ անյիշատակ կը թողու: Լաւայեան կը միտի կուսանաց անապատը նաւուշի Ս. Ստեփաննոսի հետ միացնել (Աղբ. Հանդ., 1904, էջ 330), որ այնքան ալ անհաւանական չէ, քանի որ նաւուշայ Ս. Ստեփաննոս Տեւի մօտ է (հմմտ. անդ):

13. ՓԱՌԱԿԱՅ ԶՈՐՈՅ ԿԱՄ Ս. ԳԵՈՐԳԻ, Ս. ՇՄԱՒՕՆԻ ԵՒ Ս. ՅԱԿՈԲ ՎԱՆԻՆԵՐԸ

Բեխրուտի արեւելեան կողմը եւ անկէ հաղիւ երեք վերստ հեռու բլրակի մը վրայ հիմնուած է Փառակա գիւղը, որուն անունը կապուած է երեք վանքերու:

ա) Մարտիրոս 1653ին ժամագիրք մը կը գրէ՝ «Ի հայրապետութեան աթոռոյս աէր Խաչատուր վարդապետի... ի յերկիրն Աղազիւրան (Աղատ Գիրան) ի գեաւոյն, որ կոչի Փառակայ ընդ հովանեաւ սրբոյն Գեորգիա, որ կոչի Զորոյ վանք» (Աճառեան, Յուց. հայ. Զեռ. Նոր Բայագէտի, էջ 30):

բ) Փառակայ եկեղեցին է Ս. Շմաւօն, որ նաեւ վանք եղած կը թուի եւ ունի կարեւոր արձանագրութիւն մը, ուր նշանակուած են մերձաւոր վանք-եկեղեցիներու հոգերու սահմանները՝ «Թուին ՌՃԾԵ. մենք Փառակու իշխանքս քահանայքս, աէր Գրիգոր, աէր Ստեփան, աէր Պետրոս, մահտեսի Փիլիպպոս որդի Ծատուրի, Մանուկի որդի մահտեսի Աւետիք, մահտեսի Մուրատ, Բենեաթ մահտեսի Մինասի որդի Պալեզ, Արամի որդի Մուրատ, աէր Դանիէլի որդի Թագէոս, Կարապետի որդի Պողոս, Յովհաննէսի որդի Յարութիւն, ԺԲ. անձինքս հասարակութեան խնդրանօք մեր սեպհական հոգերին տասանորդն վախուպեցինք սուրբ եկեղեցեաց կառավարութեան լոյսոյ՝ սուրբ Շմաւօն եկեղեցւոյն, Յակոբ հայրապետին,

²⁵ Թերեւս կուսաններու անապատ մը եղած ըլլայ նաեւ Աղուլիսի Ս. Մինաս մատուռին մօտ, վասն զի խաչքարի մը գրուած է՝ «Սուրբ խաչս քարեխօս լինի առ Աստուած վասն կուս Մարիամին, կուս Նոյեմզարին, որք եմք սպասաւորք սուրբ Մինասին» (Աղբ. Հանդ., 1904, էջ 313):

սուրբ Ստեփաննոսին, Եղիա մարգարէին, սուրբ Նշանին, Հուստոսիմայ խաչին. հողն է ճանապարհի տակն Ղարուճիղիցն մինչև քարկապն սուրբ Նշանին է, Երբիւշտանի ձորիցն եւ մինչի Թափուճորի գետի էս կողմն էն կողմն սուրբ Շմաւօն եկեղեցւոյն է, Թափուղանի ձորիցն մինչև Աշղպաղից սուրբ Յակոբայ հայրապետին, Ուլու-սու ճուրն աջի կողմի հողն Պատար-պաղիցն մինչի Պոյուտ ու սարն հանդի ձորի շուանն է Եղիա մարգարէին վախուպն է իւր չորս կողմն է, սրբոց պայծառութիւն» (Փափագեան Մ., Հնութիւնք հայրենեաց, Դ., Թ. 296):

գ) Փառակա գիւղի իսկական եւ անուանի վանքն է Ս. Յակոբի վանքը, որ կարմրաւուն սաշած քարերով կառուցուած է: Զորս ամբողջական եւ ութ կիսասիւններու վրայ կը բոլորուին ուսմանական կամարներ կրելով շրջանակ մը, որուն վրայ կը բարձրանայ 12 ցած ու նեղ պատուհաններով օժտուած սիրուն գմբէթը: Ունի կամարակապ սեղան մը եւ երկու խորան գաղտնի պահարաններով: Դուռը շրջապատուած է երեք կամարներով, իսկ գաւիթը գրեթէ բոլորովին քանդուած: Աւերակոյտներէն յայտնի կը տեսնուի որ Ս. Յակոբ երբեմն պարիսպներով շրջապատուած էր (Աղբ. Հանդ., 1904, էջ 332, ուր եւ պատկերը՝ էջ 331):

Սմբատեանի համաձայն Ս. Յակոբ շինուած է Փառակայիցներէն 1701ին (Երնջակ, էջ 489—490) մինչ Ն. Ալիշան աւելի զգուշութեամբ արտայայտուած է կանխաւ՝ «է ի Փառակա մենաստան շինեալ կամ նորոգեալ ի սկիզբն ԺԸ. դարու խնամով ընակչացն յանուն սրբոյն Յակոբայ հայրապետի, ուր եւ Արքայազամ կաթողիկոս իջեանցեալ ի գաղն ի Շոռոթայ եւ յերթալն ի Տեւի» (Սիսական, էջ 345, հմմտ. եւ Արք. Կրետացւոյ Պատմագրութիւն, էջ 78): Ն. Ալիշանի երկրորդ վարկածը ճիշտ է. այդ շրջանին վերանորոգուած է:

1638ին «ի գեօլս Փառակայ ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ ուխտիս» կ'աւարտի Հարցմանց գրքի արտագրութիւնը (Ակիւնեան Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 621. հմմտ. եւ Ս. Թովմայի վանքը, աստ, էջ 24): Իսկ 1700ին կ'ըլլայ Ս. Յակոբի նորոգութիւնը «ի թվին ՌՃԽԹ սուրբ Յակոբայ հայրապետի եկեղեցին ձեռն արկինք շինելո զեկեղեցիս» (Անդ, էջմ. Թ. 1288): Հաւանականաբար նորոգողներու մէջն էր Ղազար վարդապետը,

որուն տապանագրին մէջ կը կարդացուի՝ «Ռվ. ՌՃԿ. Յուսուար, Այս է տապան Ղազար վարդապետին. սա ծառայեր սուրբ Յակոբիս...» (Փափագեան, Հնութիւնք հայրենեաց, Դ., Թ. 296):

Ս. Յակոբ ունեցած է բաւական հող (Աղբ. Հանդ., 1904, էջ 332, հմմտ. եւ վերը):

14. Ս. ԱՆԻՐԵՒ ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ԿԱՄ ԳԱՆՁԱԿԱՅ ՎԱՆԻՆԸ

Գանձակ գիւղի մօտերը շինուած: Միաբանող Եղբայրներու վանք մըն է (Ալիշան, Սիսական, էջ 331): — Օտարագիրներու Հայաստանի²⁶ մէջ եւ Հայերու օտար աստղերու տակ հիմնած վանքերու մասին ուրիշ ուսումնասիրութեան մը մէջ ընդարձակօրէն պիտի խօսուի:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՊԱՇՏՊԱՆՆԵՐՆԵՐ ՍԱՂՄՈՍԵՐՆԵՐ

Մաղղէական Պարսկաստանի քաղաքական սահմաններուն մէջ կ'ապրէր մասնաւորապէս Սասանեան շրջանին՝ քրիստոնեայ կարեւոր դանդուած մը, որ թէեւ գերակշռօրէն ընկճուած ժողովուրդներէ, որոնց կարգին նաեւ Հայերէ կը բաղկանար, սակայն կը պարսիկէր պարսիկ տարր մը՝ թիւով չնչին, բայց ընկերային ու քաղաքական տեսակէտէ շատ նշանակալից¹: Այդ քրիստոնեայ պարսիկներու թիւին մէջ չենք մտածեր Մանիքեցիները, որոնք սասանեան առաջին շրջանին գերիշխող դիրք մ'ունէին²: Քրիստոնեայ կոչումին առումը հոս աւելի սեղմ է եւ կը սահմանափակուի պարսկազէնէն նորադարձներուն վրայ, որոնց կենդրոնն էր Միջագետք, ուր դարերէ ի վեր քրիստոնէութիւնը կը

²⁶ Արճէշի մէջ ծանօթ է Հոռոմիանք թաղը, ուր կար յունական եպիսկոպոսանիստ վանք մը (հմմտ. Marquart Dr. J., Südarmanien und die Tigrisquellen, Wien 1930, էջ 470 եւ Ակիւնեան Ն. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 4052, Աւետարան, 1303 տարիէն): ¹ Հմմտ. Lübeck, Die altpersische Missionskirche, Aachen 1919; J. Labourt, Le Christianisme dans l'empire perse sous la dynastie Sassanide, Paris 1904; Sachau E., Vom Christentum in der Persis, Sitzungsberichte, V, 1916. ² A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagen 1936, p. 174—200, ճոխ մատենագրութեամբ:

ծաղկէր ասորական գաղութներու մէջ եւ կրօնական քարոզչութիւնը ըստ հնարաւորութեան ծաւալուն գործունէութիւն կը ցուցնէր: — Յատկանշական է որ քրիստոնեայ Հայաստանը, հակառակ իւր ծաւալումին դէպի հիւսիս ու հիւսիս-արեւելք, պարսկական Արեւելքի հանդէպ կը մնայ ձեռնպահ. հայ եկեղեցական պատմութիւնը չի ներկայացներ հայ դէմք մը, որ ոգեւորուած ըլլայ մաղղէականներու դարձի հարցով կամ դրաղած անոնց քրիստոնէացմամբ: Թէեւ մեր վիպարանութիւնները առատօրէն նիւթ կը մատակարարեն պարսիկ նորադարձերու մասին³:

Պարսիկ քրիստոնեաներու նշանակութիւնը աւելի քաղաքական էր այն տեսակէտէ, որ նորադարձերու աճուն թիւը կը մտահոգէր մաղղէական նուիրապետութիւնը, որուն պաշտօնէութիւնը միաժամանակ քաղաքական իշխանութեան պետերն էին. եւ մինչ իւր կրօնական հասարակութեան պահպանման ի նպաստ քայլեր կ'անէր նա՝ կը սեղմէր քրիստոնեայ փոքրամասնութիւններու շարժելու ազատութիւնը — պարազայ մը, որ յաճախ ծրագրուած հալածանքներու պիտի յանդէր բնականաբար՝ միաձոյլ պարսկազաւան տարր մը կաղմելու նպատակով: Մեր մատենագիրները վերջին տեսակէտը միայն կը շօշափեն լայն տեղ տալով հալածանքներուն:

Պարսիկ քրիստոնեաներու պատմութիւնը սեղմօրէն կապուած է ասորական գաղութներու հետ, նոյնչափով նաեւ անոնց քրիստոնէական մշակոյթը — եթէ ոչնչացումէն փրկուած բեկորներուն կարելի է այդ անունը տալ: Հասկնալի է անտարակոյս որ պարսիկ քրիստոնէութեան մէկ կարեւոր խմորը ասորական էր, ուստի նաեւ պարսկախօս ասորիներ այդ դասուն կը պատկանէին — այս կէտը պիտի օգնէ լուսաբանելու ասորական բաղմաթիւ փոխառութիւններու դոյութիւնը քրիստոնեայ պարսիկ մատենագրութեան մէջ, որմէ յատկապէս իբր մեծագոյն յուշարձան պահաւերէն Սաղմոսարանն է մնացած: — Միջանկեալով պիտի հարցնէինք որ մեր ասորական փոխառութիւններու⁴ մէջ եւս բացի

³ Վարք եւ վիպարանութիւնք սրբոց, Ա., Բ., վեհտ. 1874. ի Bibliotheca Hagiogr. Orient., Bruxelles 1910, համագրուած: ⁴ Hübschmann, Arm. Gramm., II, 299—321; Տաշեան, Ուսումնասիրութիւնք հայերէն փոխառակրտայ, ՍՄ., Թ. 15, էջ 3—49: